ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

GLOSSARY OF QUALITY ASSURANCE

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

(աշխատանքային նյութեր)

GLOSSARY OF QUALITY ASSURANCE

(working papers)

CONTENTS

Բովանդակություն

A 7
B 17
C 21
D 29
E 31
F 39
G 41
H 43
I 45
J 49
L 49
M 51
N 53
Q 63
R 77
S 83
T 95
U 97
V 99
W 99
References / Գրականության ցանկ 101

Dear Colleagues,

In order to enhance the effectiveness of collaborative activities and promote the changes in the tertiary education sphere, it is first essential to build a high level of common understanding of the terms common in tertiary education in general and those of quality assurance in particular. With this aim, ANQA has undertaken a major project of a glossary development, which aims to

- be a reference tool explicating the connotations of the terms in circulation in the European Higher Education Area,
- facilitate and deepen the understanding of the terms common in the tertiary education literature in general and that of quality assurance in particular,
- reflect the new developments in quality assurance and accreditation,
- start a dialogue among the tertiary education stakeholders around the establishment of the accurate and acceptable Armenian equivalents,
- be a working paper, which will promote establishment of a glossary of terms in the sphere of quality assurance.

Within the frames of the project, ANQA has joined efforts to compile the main terms and definitions in the areas of quality assurance and accreditation in tertiary education common at international level in a succinct and easily accessible format. Given the peculiarities of the Armenian legal framework, the potential disagreements around different terms as well as a variety of interpretations while converting into the Armenian language, the ANQA working group has translated the terms and definitions as they are avoiding blind substitution with the Armenian equivalents.

To provide for success this very process should be initiated employing various methods, including the effective exchange of information. In order to establish a glossary of terms, which is most suitable for the Armenian reality and acceptable for the stakeholders at large, ANQA calls upon its stakeholders' input in the continuous development of this important document. In the course of time, based on your reflections, ANQA, on an iterative basis, will further refine and elaborate this draft version.

It is our hope that the activities carried out within the frames of the glossary development will promote consensus making around the terms and definitions, thus, contributing to the establishment of a quality culture.

The terms in this glossary were selected and translated through careful analysis and consideration by ANQA working group and external experts. ANQA extends its acknowledgement to those who have had their invaluable input in the production of its first version.

R. Topchyan
ANQA Director

Հարգելի գործընկերներ,

Մեր համագործակցությունը առավել արդյունավետ դարձնելու և բարեփոխումներին նպաստելու համար, առաջնահերթ խնդիրներից է ստեղծել մասնագիտական կրթության, մասնավորապես, որակի ապահովման ոլորտում ընդունված տերմինների համընդհանուր ընկալում:

ՈԱԱԿ-ը նախաձեռնել է տերմինաբանական բառարան ստեղծելու մի գործընթաց որի նպատակն է.

- լուսաբանել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում շրջանառության մեջ գտնվող տերմինները,
- նպաստել մասնագիտական կրթության և, հատկապես, որակի ապահովման ոլորտում ընդունված տերմինների համադրելիությանը և ավելի խորը ընկալմանը,
- անդրադառնալ որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում տեղի ունեցող գործընթացներին և փոփոխություններին,
- նպաստել մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների միջև երկխոսությանը՝ համարժեք հայերեն տերմինները սահմանելու համար,
- ունենալ աշխատանքային նյութ, որը կօգնի տալ որակի ապահովման ոլորտում հայերեն լեզվով համարժեք տերմիններ և հասկացությունների սահմանումներ:

ՈԱԱԿ-ը՝ օգտվելով միջազգային ընդունված տարբեր աղբյուրներից, պատրաստել է տերմինարան, որտեղ հակիրճ և հասանելի ձևով ներկայացված են մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովմանը և հավատարմագրմանը վերաբերող տերմինները, սահմանումները և հասկացությունները: Հաշվի առնելով ՀՀ-ում իրավական դաշտի յուրահատկությունները, տարբեր տերմինների շուրջ անհամաձայնությունները, ինչպես նաև հայերեն թարգմանելուց առաջացած հնարավոր տարբեր մեկնաբանումները՝ ՈԱԱԿ-ի աշխատանքային խումբը թարգմանել է տվյալ ոլորտի տերմինները և սահմանումները առանց իմաստային փոփոխություններ կատարելու՝ խուսափելով տեղայնացումներից:

Տերմինների համընդհանուր ընկալմանը նպաստելու համար կարևորագույն մեթոդներից է տեղեկատվության արդյունավետ փոխանակումը: ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում ավելի կիրառելի, միասնական և համընթեռնելի տերմինների և սահմանումների ստեղծման համար ՈԱԱԿ-ը կոչ է անում Ձեզ մասնակցել այս կարևոր փաստաթղթի շարունակական մշակման գործընթացին: Հիմնվելով Ձեր արձագանքների և կարծիքների վրա՝ ՈԱԱԿ-ը կմշակի տերմինների բացատրական բառարան:

Հուսով ենք որ այս տերմինարանի մշակման շրջանակում նախաձեռնված գործողությունները կնպաստեն տերմինների և սահմանումների շուրջ ընդհանուր համաձայնությանը՝ աջակցելով որակի մշակույթի ստեղծմանը:

Սույն տերմինները և սահմանումները ընտրված և թարգմանված են ՈԱԱԿ-ի աշխատանքային խմբի և արտաքին փորձագետների կողմից: ՈԱԱԿ-ը շնորհակալություն է հայտնում բոլոր այն անձանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս նախնական տարբերակի մշակմանը:

Ռ. Թոփչյան,
ՈԱԱԿ Տնօրեն

A
Academic Assistant Workers staffed for assisting the implementation of academic programs (e.g. teaching assistants).
Academic Degree/Academic Title A qualification conferred upon students who successfully complete academic programs of universities, graduate schools and junior colleges. Current degrees are Bachelor's, Master's, Doctoral, Professional and Associate Degrees.
Academic Recognition Approval of courses, qualifications, or diplomas from one (domestic or foreign) higher education institution by another for the purpose of student admission to further studies. Academic recognition can also be sought for an academic career at a second institution and in some cases for access to other employment activities on the labour market (academic recognition for professional purposes). As regards the European Higher Education Area, three main levels of recognition can be considered, as well as the relevant instruments (as suggested by the Lisbon Convention and the Bologna Declaration): (i) recognition of qualifications, including prior learning and professional experience, allowing entry or re-entry into higher education; (ii) recognition of short study periods in relation to student mobility, having as the main instrument the ECTS (European Credit Transfer System); (iii) recognition of full degrees, having as the main instrument the Diploma Supplement.
Academic Staff Staff who conduct education and research in subject institutions such as professors, associate professors, lecturers, and assistant professors.
Accountability A general term used to describe the responsibility or the process by which corporations explain or justify their performance to their stakeholders and the public.

Ակադեմիական օգնական Աշխատակազմ, որն աջակցում է կրթական ծրագրերի իրականացմանը:
Ակադեմիական աստիճան/ ակադեմիական կոչում Որակավորում, որը շնորհվում է կրտսեր քոլեջը և համալսարանի բակալավրիատը, մագիստրատուրան կամ ասպիրանտուրան հաջողությամբ ավարտած ուսանողներին: Առկա ակադեմիական աստիճաններն են՝ բակալավրի աստիճան, մագիստրոսի աստիճան, դոկտորի աստիճան, պրոֆեսորի և դոցենտի կոչում:
Ակադեմիական ճանաչում Մի բուհի (տեղական կամ արտասահմանյան) դասընթացների, որակավորումների և դիպլոմների ճանաչում մեկ այլ բուհի կողմից՝ հետագա դասընթացներին ուսանողների ընդունելությունը (ուսանողների շարժունությունը) ապահովելու նպատակով: Ակադեմիական ճանաչումը կարող է նաև աշխատանքի տեղավորման հնարավորություն ընձեռել մեկ այլ ուսումնական հաստատությունում և, որոշ դեպքերում, առհասարակ աշխատաշուկայում (մասնագիտական նպատակներից բխող ակադեմիական ճանաչում): Ինչ վերաբերում է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին, կարելի է առանձնացնել ճանաչման երեք հիմնական մակարդակ, ինչպես նաև դրանց համապատասխան գործիքները (ինչպես առաջարկում են Լիսաբոնյան և Բոլոնիայի հռչակագրերը)՝ ա) որակավորումների ճանաչում՝ ներառյալ ոչ ֆորմալ կրթությունը և մասնագիտական փորձը, ինչը բարձրագույն կրթություն ստանալու նոր հնարավորություն կընձեռի; բ) ուսումնառության կարճատև ժամանակահատվածների ճանաչում՝ կապված ուսանողների շարժունության հետ. այս մակարդակում հիմնական գործիքն է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը; գ) ամբողջական աստիճանների ճանաչում. այս մակարդակում հիմնական գործիքն է Դիպլոմի հավելվածը:
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ Աշխատակազմ, որը ուսուցանում է և հետազոտություններ է կատարում ուսումնական հաստատություններում, օրինակ՝ պրոֆեսորներ, դոցենտներ, դասախոսներ և պրոֆեսորների օգնականներ:
Հաշվետվողականություն Ընդհանուր եզրույթ, որը նկարագրում է կազմակերպությունների պատասխանատվությունը կամ այն գործընթացը, որով նրանք բացատրում կամ արդարացնում են իրենց կատարողականությունը իրենց շահակիցների և հասարակության առջև:

Accreditation

1. The process by which a (non-)governmental or private body evaluates the quality of a higher education institution as a whole or of a specific educational programme in order to formally recognize it as having met certain predetermined minimal criteria or standards. The result of this process is usually the awarding of a status (a yes/no decision), of recognition, and sometimes of a license to operate within a time-limited validity. The process can imply initial and periodic self-study and evaluation by external peers. The accreditation process generally involves three specific steps: (i) a self-evaluation process conducted by the faculty, the administrators, and the staff of the institution or academic programme, resulting in a report that takes as its reference the set of standards and criteria of the accrediting body; (ii) a study visit, conducted by a team of peers, selected by the accrediting organization, which reviews the evidence, visits the premises, and interviews the academic and administrative staff, resulting in an assessment report, including a recommendation to the commission of the accrediting body; (iii) an examination by the commission of the evidence and recommendation on the basis of the given set of criteria concerning quality and resulting in a final judgment and the communication of the formal decision to the institution and other constituencies, if appropriate.

2. The instrument by which one institution, without its own degree awarding powers or choosing not to use its awarding powers, gains wide authority to award, and/or gains recognition of its qualifications from another competent authority, and to exercise powers and responsibility for academic provision. This authority might be the State, a government agency, or another domestic or foreign higher education institution.

Հավատարմագրում

1.Գործընթաց, որով (ոչ-)պետական կամ մասնավոր կազմակերպությունը գնահատում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կոնկրետ կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախասահմանված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրա համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով: Այս գործընթացի արդյունքում ուսումնական հաստատությանը տրվում է ճանաչման կարգավիճակ (հավատարմագրված/ չհավատարմագրված), երբեմն էլ գործունեությունը թույլատրող լիցենզիա՝ սահմանափակ վավերականության ժամկետով: Գործընթացը կարող է ներառել նախնական և շարունակական ինքնագնավերլուծություն հաստատության կողմից և գնահատում արտաքին փորձագետների կողմից: Հավատարմագրման գործընթացը ընդհանրապես ներառում է 3 կոնկրետ քայլ՝ ա) հաստատության կամ կրթական ծրագրի ինքնագնահատման գործընթաց ֆակուլտետի, ղեկավարների, աշխատակազմի կողմից, որի արդյունքնում պատրաստվում է զեկույց՝ հիմնված հավատարմագրող կազմակերպության չափանիշների և չափորոշիչների վրա; բ) այց ուսումնական հաստատություն հավատարմագրող կազմակերպության կողմից ընտրված փորձագետների խմբի կողմից, որը վերանայում է փաստերը, այցելում է հաստատության շինությունները, հարցազրույց է անցկացնում վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ արդյունքում պատրաստելով գնահատման զեկույց, որը ներառում է խորհրդատվություն հավատարմագման հանձնաժողովի համար; գ) հավատարմագրման հանձնաժողովի կողմից փաստերի ուսումնասիրություն և խորհրդատվություն՝ հիմնված որակի չափորոշիչների վրա, որի արդյունքում ընդունվում է վերջնական որոշում, որը հայտնում են ուսումնական հաստատությանը և այլ համապատասխան մարմինների:

2. Գործընթաց, որի շնորհիվ մեկ մասնագիտական ուսումնական հաստատություն իրավունք է ձեռք բերում շնորհելու որակավորումներ կամ ճանաչվում է մեկ այլ իրավասու մարմնի կողմից: Վերջինս կարող է լինել Պետությունը, որևէ կառավարական մարմին կամ տեղական/արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություն:

Accreditation Body A (non-)governmental or private educational association of national or regional scope that develops evaluation standards and criteria and conducts peer evaluations and expert visits to assess whether or not those criteria are met. It is entitled to accord formal status and sometimes a license to operate to? individual higher education institutions or programmes, following the successful examination of the application and evaluation of the respective educational unit. There are different types of accreditation bodies (e.g. agencies, councils, commissions, etc.), focused on general accreditation, specialized accreditation, professional accreditation, regional accreditation, national accreditation, distance education accreditation, etc.
Accreditation of Prior Learning The process by which individuals are awarded credit toward qualifications based on their prior learning and (sometimes) experience (also called experiential learning). The credit is awarded upon clear evidence that the respective learning has resulted in the student having achieved the appropriate learning outcomes.
Accreditation Status The formal recognition benefiting an institution or specialized programme for meeting the appropriate standards of educational quality established by the accrediting body at a regional, national, or specialized level.
Accreditation Survey The evaluation of an institution to identify its level of compliance with the applicable standards of the accreditation body and to make determinations concerning its accreditation status. The survey includes an evaluation of documents and information (evidence) provided by the personnel of the higher education institution, following on-site observations by mandated visitors.

Հավատարմագրող կառույց (ոչ-) Պետական կամ մասնավոր ազգային կամ տարածաշրջանային կրթական միություն, որը մշակում է գնահատման չափորոշիչներ և չափանիշներ և իրականացնում է փոխգնահատում և փորձագիտական այցեր՝ ստուգելու, թե արդյոք այս չափանիշները պահպանվում են ուսումնական հաստատությունում: Այն իրավունք ունի ստանալ պաշտոնական կարգավիճակ, կամ, երբեմն, շնորհել գործունեության լիցենզիա (թույլտվություն) որևէ բարձրագույն ուսումնական հաստատությանը կամ կրթական ծրագրին՝ վերջինիս կողմից դիմում հայտը ուսումնասիրելուց և տվյալ ուսումնական միավորը գնահատելուց հետո: Կան տարբեր տեսակի հավատարմագրող կառույցներ՝գործակալություններ, խորհուրդներ, հանձնախմբեր և այլն, որոնք կատարում են ընդհանուր հավատարմագրում, մասնագիտացված հավատարմագրում, մասնագիտության հավատարմագրում, տարածաշրջանային հավատարմագրում, ազգային հավատարմագրում, հեռակա ուսուցման հավատարմագրում և այլն:
Ոչ ֆորմալ կրթության հավատարմագրում Գործընթաց, որի միջոցով անհատներին շնորհվում է կրեդիտ ոչ ֆորմալ կրթության և, երբեմն, փորձի հիման վրա ձեռք բերված որակավորումների համար: Կրեդիտը շնորհվում է այն փաստերի առկայության դեպքում, որոնք վկայում են, որ համապատասխան ուսումնառության արդյունքում ուսանողը ձեռք է բերել անհրաժեշտ ուսումնառության արդյունքները:
Հավատարմագրվածի կարգավիճակ Ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի պաշտոնական ճանաչում, ինչը վկայում է, որ վերջինս համապատասխանում է հավատարմագրող կառույցի կողմից սահմանած որակյալ ուսուցման չափորոշիչներին տարածաշրջանային, ազգային կամ որոշակի մասնագիտական մակարդակներում:
Հավատարմագրման նպատակով ուսումնասիրություն Ուսումնական հաստատության գնահատում՝ վերջինիս համապատասխանությունը հավատարմագրող կառույցի կողմից սահմանված չափորոշիչներին որոշելու և դրա հավատարմագրվածի կարգավիճակի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով: Ուսումնասիրությունը ներառում է բարձրագույն ուսումնական հաստատության աշխատակազմի կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկատվության (փաստերի) գնահատում, որին հաջորդում է նշանակված փորձագետների այցը ուսումնական հաստատություն և տեղում դիտարկումները:

Accumulation of Study Credits Set credits gained by a student in a given higher education institution may be recognized in another institution, depending upon the commonality in terms of level and context, considered as transferable.
Achievement Evaluation Evaluation focused on how successfully the institution is achieving its goals and objectives.
Administrative Council A mandatory body set up in every national university corporation to discuss key issues of management. It is composed of the president, vice-presidents and staff appointed by the president, and external experts.
Assessment 1. The process of the systematic gathering, quantifying, and using of information in view of judging the instructional effectiveness and the curricular adequacy of a higher education institution as a whole (institutional assessment) or of its educational programmes (programme assessment). It implies the evaluation of the core activities of the higher education institution (quantitative and qualitative evidence of educational activities and research outcomes). Assessment is necessary in order to validate a formal accreditation decision, but it does not necessarily lead to an accreditation outcome. 2. A technically designed process for evaluating student learning outcomes and for improving student learning and development as well as teaching effectiveness.
Assessment of Individual Qualifications The formal written appraisal or evaluation of qualifications of an individual by a competent authority in order to grant him or her recognition for future academic and/or professional development.

Կրեդիտների կուտակում Որևէ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողի ստացած կրեդիտները կարող են ճանաչվել մեկ այլ ուսումնական հաստատությունում՝ կախված կրեդիտների մակարդակի և համատեքստի ընդհանրություններից. սրանք փոխանցելի կրեդիտներ են:
Ձեռքբերումների գնահատում Գնահատում, որը արտացոլում է, թե որքանով է բուհը իրականացնում իր նպատակները:
Վարչական խորհուրդ Լիազոր մարմին՝ հիմնադրված յուրաքանչյուր ազգային համալսարանական միությունում, որը միտված է քննարկելու կառավարման հետ կապված առաջնային խնդիրները: Վարչական խորհուրդը կազմված է նախագահից, նախագահի տեղակալից, նախագահի կողմից նշանակված աշխատակազմից և արտաքին փորձագետներից:
Գնահատում 1. Տեղեկատվության կանոնավոր հավաքման, դասակարգման և կիրառման գործընթաց, որը միտված է որոշելու բարձրագույն ուսումնական հաստատության (ինստիտուցիոնալ գնահատում) կամ դրա կրթական ծրագրերի (ծրագրային գնահատում) կառուցվածքային արդյունավետությունը և ծրագրային համապատասխանությունը: Այն ներառում է բարձրագույն ուսումնական հաստատության ամբողջական գործունեության գնահատում (ուսումնառության և հետազոտության արդյունքների քանակական և որակական փաստեր): Գնահատումը անհրաժեշտ է հավատարմագրման պաշտոնական որոշումը վավերացնելու համար, բայց նա պարտադիր կերպով չի հանգեցնում հավատարմագրման: 2.Տեխնիկապես մշակված գործընթաց՝ ուսանողների ուսումնառության արդյունքները գնահատելու, նրանց ուսումնառությունը և զարգացումը բարելավելու, ինչպես նաև ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:
Անհատական որակավորումների գնահատում Անհատի որակավորումների պաշտոնական գրավոր գնահատում համապատասխան իրավասու մարմնի կողմից՝ հետագա ակադեմիական և/կամ մասնագիտական զարգացման համար ճանաչում շնորհելու նպատակով:

Attainment of Objectives An evaluation commentary on optional evaluation items. It does not lead to a judgment whether something meets certain standards or not, but comments on how far the achievements or performance of subject institutions are meeting their aims.
Attitudinal Competencies Actions, values and norms that indicate and generate high performance, and also show that the different types of knowledge have been effectively developed by the subject.
Audit The process of reviewing an institution or a programme that is primarily focused on its accountability, and determining if the stated aims and objectives (in terms of curriculum, staff, infrastructure, etc.) are met.
Audit Report/Evaluation Report/Assessment Report (i) The document prepared following a quality assessment peer review team site visit that is generally focused on institutional quality, academic standards, learning infrastructure, and staffing. The report about an institution describes the quality assurance (QA) arrangements of the institution and the effects of these arrangements on the quality of its programmes. The audit report is made available to the institution, first in draft form for initial comments, and then in its final, official form. It contains, among other things, the description of the methodology of the audit, the findings, the conclusions of the auditors, and various appendices listing the questions asked. In Europe, the document is often called an “evaluation report” or an “assessment report”. (ii) Such a report may also be prepared about an accreditation agency, describing its quality assurance arrangements and the effect of these arrangements on the quality of the programmes in the institutions for which it is responsible.

Նպատակների իրականացում Կամընտիր միավորների գնահատման մեկնաբանություն: Այն չի հանգեցնում դատողության, թե արդյոք մասնագիտական ուսումնական հաստատության ձեռքբերումներն ու կատարողականությունը համապատասխանում են որոշակի չափորոշիչներին, այլ մեկնաբանում է, թե որքանով են դրանք համապատասխանում սահմանված նպատակներին:
Արժևորելու կարողություններ Գործողություններ, արժեքներ և նորմեր, որոնք մատնանշում, ինչպես նաև ձևավորում են կատարողականության բարձր մակարդակ և նաև ցույց են տալիս, որ տվյալ առարկայի շրջանակներում արդյունավետ զարգացել են գիտելիքի տարբեր տեսակներ:
Փորձաքննություն Որևէ մասնագիտական ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի ուսումնասիրություն/վերանայում՝ որոշելու համար, թե արդյոք իրականացվում են սահմանված նպատակները (կապված ուսումնական պլանի, աշխատակազմի, ենթակառուցվածքի և այլնի հետ):
Փորձաքննության զեկույց/ Գնահատման զեկույց ա) Որակի գնահատման փորձագիտական խմբի՝ ուսումնական հաստատություն կատարած ստուգայցին հաջորդող փաստաթուղթ, որը, ընդհանրապես, կենտրոնացած է ինստիտուցիոնալ որակի, ակադեմիական/կրթական չափորոշիչների, ուսումնառության միջավայրի և աշխատակազմի ընտրության վրա: Մասնագիտական ուսումնական հաստատությանը վերաբերվող զեկույցը նկարագրում է հաստատության որակի ապահովման գործընթացները և դրանց ազդեցությունը կրթական ծրագրերի որակի վրա: Փորձաքննության զեկույցը հասանելի է ուսումնական հաստատությանը սկզբում սևագիր տարբերակով՝ դիտողություններ անելու նպատակով, և հետո՝ իր վերջնական, պաշտոնական տարբերակով: Այն ներառում է, բացի բուն բովանդակությունից, նաև փորձաքննության մեթոդաբանության նկարագիրը, արված բացահայտումները, փորձագետների եզրակացությունը և զանազան հավելվածներ՝ ներառող տրված հարցերը: Եվրոպայում այս փաստաթուղթը հաճախ կոչվում է «գնահատման զեկույց»: բ) Այսպիսի զեկույց կարող է նաև պատրաստվել հավատարմագրող կազմակերպության վերաբերյալ՝ նկարագրելով վերջինիս որակի ապահովման գործընթացները և դրանց ազդեցությունը այն հաստատությունների կրթական ծրագրերի որակի վրա, որոնց համար հավատարմագրող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում:

Auditing Student for Credit Accepting System A system that allows students to enter higher education institutions to follow only courses of particular interest or necessity to themselves. By completing subjects, students may collect credits which, if they wish to obtain a qualification, can be accumulated when taking a formal degree program.
Auditing Student System A system which higher education institutions accept students who take certain subjects for their personal interest only. The distinction between the auditing student for credit accepting system and the auditing student system is that students on the latter system cannot acquire credits and therefore their studies do not lead to a degree.

B
Benchmark A standard, a reference point, or a criterion against which the quality of something can be measured, judged, and evaluated, and against which outcomes of a specified activity can be measured. The term, benchmark, means a measure of best practice performance. The existence of a benchmark is one necessary step in the overall process of benchmarking.
Benchmarking A standardized method for collecting and reporting critical operational data in a way that enables relevant comparisons among the performances of different organizations or programmes, usually with a view to establishing good practice, diagnosing problems in performance, and identifying areas of strength. Benchmarking gives the organization (or the programme) the external references and the best practices on which to base its evaluation and to design its working processes.

Ուսանողների կրդետիտների ճանաչման համակարգ Համակարգ, որը ուսանողներին թույլ է տալիս, ընդունվելով բարձրագույն ուսումնական հաստատություն, անցնել միայն այն առարկաները, որոնք իրենց համար հատկապես հետաքրքիր են, կամ անհրաժեշտ: Առարկան ավարտելով՝ ուսանողները կարող են հավաքել կրեդիտներ, որոնք կարող են կուտակվել որակավորում ստանալու ցանկության դեպքում ֆորմալ աստիճանի կրթական ծրագիր անցնելիս:
Ազատ ունկնդիրների համակարգ Համակարգ, որով բարձրագույն ուսումնական հաստատությունները ընդունում են այն ուսանողներին, որոնք ընտրում են առարկաներ միայն իրենց անձնական հետաքրքրությունից ելնելով: Ուսանողների կրդետիտների ճանաչման համակարգի և ազատ ունկնդիրների համակարգի միջև տարբերությունը այն է, որ երկրորդ համակարգի ուսանողները չեն ստանում կրեդիտներ, և, հետևաբար, նրանց ուսումնառությունը չի հանգեցնում որևէ աստիճանի ստացման:

Բենչմարք Չափորոշիչ, հղման կետ կամ չափանիշ, որի նկատմամբ կարող է չափվել, կշռադատվել և գնահատվել որևէ օբյեկտի որակը կամ սահմանված գործողության արդյունքները: «Մակարդակի նիշ/բենչմարք » եզրույթը նշանակում է լավագույն փորձի մակարդակի չափման միջոց: Մակարդակի նիշի գոյությունը բենչմարքինգի ողջ գործընթացի անհրաժեշտ մի բաղադրիչ է:
Բենչմարքինգ Կարևորագույն գործառնական տվյալների հավաքման և ներկայացման ստանդարտացված այնպիսի մի մեթոդ, որը թույլ է տալիս համադրել տարբեր հաստատությունների կամ ծրագրերի կատարողականությունը՝ լավագույն փորձի որոշման, գործունեության հիմնախնդիրների ախտորոշման և ուժեղ կողմերի բացահայտման նկատառումներով: Բենչմարքինգը տալիս է ուսումնական հաստատությանը (կրթական ծրագրին) իր աշխատանքային գործընթացը կազմակերպելու համար լավագույն փորձ և արտաքին հղման կետեր:

Benchmarking is also defined as:
- a diagnostic instrument (an aid to judgments on quality);
- a self-improvement tool (a quality management/ assurance tool) allowing organizations (or programmes) to compare themselves with others regarding some aspects of performance, with a view to finding ways to improve current performance;
-an open and collaborative evaluation of services and processes with the aim of learning from good practices;
- a method of teaching an institution how to improve;
- an ongoing, systematically oriented process of continuously measuring the work processes of one organization and comparing them with those of others by bringing an external focus to internal activities.

Benchmarking implies specific steps and structured procedures. Depending on what is being compared or the type of information an institution is gathering, there are different types of benchmarking: strategic benchmarking (focusing on what is done, on the strategies organizations use to compete); operational benchmarking (focusing on how things are done, on how well other organizations perform, and on how they achieve performance), or databased benchmarking (statistical bench-marking that examines the comparison of data-based scores and conventional performance indicators). There is also internal/external and external collaborative/transindustry/ implicit benchmarking.

Benchmark Information

Explicit national statements of academic standards or outcomes for individual subjects. Some countries (e.g. the United Kingdom) develop benchmarks of this type with regard to a certain group of subjects as part of their quality assurance process.

Բենչմարքինգը սահմանվում է նաև /բնորոշվում է/ որպես՝ -ախտորոշման գործիք (որակը սահմանելու միջոց),-ինքնաբարելավման գործիք (որակի ապահովման/ կառավարման գործիք), որը թույլ է տալիս ուսումնական հաստատություններին (կրթական ծրագրերին) համեմատվել այլ ուսումնական հաստատությունների (կրթական ծրագրերի) հետ՝ իրենց գործունեությունը բարելավելու նպատակով;
- Ուսումնական հաստատության (կրթական ծրագրի) ծառայությունների և գործընթացների բաց և համագործակցային գնահատում՝ լավագույն փորձից սովորելու նպատակով;
- Ուսումնական հաստատությանը բարելավել սովորեցնելու մեթոդ;
-Որևէ ուսումնական հաստատության աշխատանքային գործընթացների շարունակական և համակարգված ուսումնասիրություն և համեմատում այլ հաստատությունների հետ՝ ներքին գործունեության վրա արտաքին ուշադրություն հրավիրելու միջոցով:

Բենչմարքինգը ներառում է առանձնահատուկ քայլեր և համակարգված գործընթացներ: Կախված այն բանից, թե ինչն է համեմատության առարկան, կամ ինչ տեսակի տեղեկատվություն է ուսումնական հաստատությունը հավաքում, կան Բենչմարքինգի տարբեր տեսակներ՝

ռազմավարական բենչմարքինգ

- ✓ ռազմավարական բենչմարքինգը կենտրոնանում է այն ռազմավարությունների վրա, որոնք որդեգրում են ուսումնական հաստատությունները ՝մրցակցության մեջ մնալու համար;
- ✓ գործառնական բենչմարքինգ. կենտրոնանում է գործընթացների իրականացման ձևի վրա, ցույց է տալիս, թե այլ ուսումնական հաստատությունները որքանով են ճիշտ գործում, և ինչպես է իրականացնում իր գործունեությունը տվյալ ուսումնական հաստատությունը
- ✓ բենչմաչքինգ հիմնված տվյալների բազայի վրա. վիճակագրական բենչմարքինգ, որն ուսումնասիրում է համեմատությունը տվյալների վրա հիմնված ցուցիչների և սովորական կատարողականի ցուցիչների միջև: Կան նաև ներքին/ արտաքին և արտաքին համագործակցային/ անդրճյուղային բենչմարքինգի վերլուծության տեսակներ:

Տվյալներ բենչմարքի մասին

Առանձին առարկաների ակադեմիական չափորոշիչների կամ արդյունքների ազգային սահմանումներ: Որոշ երկրներ (Մեծ Բրիտանիա) մշակում են այսպիսի բենչմարքեր առարկաների որոշակի խմբերի համար՝ համարելով դա իրենց որակի ապահովման գործընթացի մի մաս:

Best Practice
A method or an innovative process involving a range of safe and reasonable practices resulting in the improved performance of a higher education institution or programme, usually recognized as “best” by other peer organizations. A best practice does not necessarily represent an absolute, ultimate example or pattern, its application assures the improved performance of a higher education institution or programme; rather, it identifies the best approach to a specific situation, as institutions and programmes vary greatly in constituencies and scope.

C

Certificate System for Extension Programs
A system which universities can issue certificates to those who complete a special program designed for people other than their students. Its purpose is to promote provide systematic education and learning opportunities for adults with various needs. Universities can use this system when providing special programs, regular classes and open classes.

Certification
The process by which an agency or an association acknowledges the achievement of established quality standards and usually grants certain privileges to the target individual (student or teacher).

Code of Practice
A Code of Practice is a non-binding document that describes the minimum audit requirements and those that are considered to reveal a practice worthy of consideration. A Code identifies a comprehensive series of system-wide expected conduct covering matters relating to the management of academic quality and standards in higher education. It provides an authoritative reference point for institutions as they consciously, actively, and systematically assure the academic quality and standards of

Լավագույն փորձ
Մեթոդ կամ նորարարական գործընթաց, որը ներառում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի կատարողականությունը բարելավող ապահով և խելամիտ գործընթացների ամբողջությունը, որը սովորաբար ճանաչվում է որպես «լավագույն» այլ համագործակից կազմակերպությունների կողմից: Լավագույն փորձը ոչ թե անհրաժեշտաբար ներկայացնում է բացարձակ, վերջնական օրինակ կամ ձևաչափ, այլ դրա կիրառումը բարելավում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի գործունեությունը, այն սահմանում է լավագույն մոտեցումը տվյալ իրադրության նկատմամբ, քանի որ ուսումնական հաստատություններն ու կրթական ծրագրերը մեծապես տարբերվում են՝ ըստ իրենց բաղադրիչների և գործունեության շրջանակի:

Ատեստավորման համակարգ լրացուցիչ կրթական ծրագրերի համար
Համակարգ, որի միջոցով ուսումնական հաստատությունները կարող են ատեստատ հանձնել այն մարդկանց, ովքեր ավարտում են ոչ տվյալ հաստատության ուսանողների համար նախատեսված հատուկ կրթական ծրագիր: Սրա նպատակը տարբեր կարիքներ ունեցող չափահաս մարդկանց համար համակարգված կրթության և ուսումնառության հնարավորությունների ապահովումն է: Համալսարանները կարող են կիրառել այս համակարգը հատուկ ծրագրեր, կանոնավոր և բաց դասեր կազմակերպելիս:

Ատեստավորում
Գործընթաց, որի միջոցով որակի ապահովման կազմակերպությունները կամ միությունները ճանաչում են որևէ անհատի՝ սահմանված որակի չափորոշիչների ձեռքբերումը և ,սովորաբար, որոշակի առավելություններ են շնորհում տվյալ անհատին (ուսանող կամ դասախոս):

Գործունեության ուղեցույց
Գործունեության ուղեցույցը չպարտավորեցնող փաստաթուղթ է, որը նկարագրում է փորձաքննության համար նվազագույն պահանջները և այն պահանջները, որոնք բացահայտում են քննարկման արժանի գործընթացները: Ուղեցույցը սահմանում է ակնկալվող գործունեության համակարգի համապարփակ շղթա, որը ներառում է կրթական որակի կառավարմանը և բարձրագույն կրթության չափորոշիչներին վերաբերվող հարցերը: Այն հիմք է

their programmes, awards, and qualifications. A Code assumes that, taking into account nationally agreed upon principles and practices, each institution has its own systems for independent verification both of its quality and standards and of the effectiveness of its quality assurance systems.
Code of (Professional) Ethics Concerning Quality Assurance and Accreditation in Higher Education A public document establishing a framework for ethical behaviour and decision making in the conduct of quality assurance and accreditation activities in higher education. As useful instruments for achieving transparency and comparability of internal and external quality assurance of higher education, codes of ethics usually consist of a set of basic principles, values and rules of conduct to be considered as reference points in quality assurance and accreditation work together with a set of procedural regulations for observing compliance with the Code. Tailored to the needs and values of the respective organization, codes of ethics may include references to issues such as conflict of interest, confidentiality, intellectual property, permanent development, trust, etc.
Cognitive Competencies Skills that contribute to the objectives of individual knowledge development, also serving as individual protective factors contributing to successful adaptation. These may include competencies like: reasoning, information-gathering, information analysis, systems-thinking and pattern recognition, theory building, problem-solving, decision-making, planning and goal-setting.

ուսումնական հաստատությունների համար իրրև հղման կետ՝ առ այն, որ ուսումնական հաստատությունները գիտակցաբար, ակտիվ և պարբերաբար ապահովում են իրենց կրթական ծրագրերի, կոչումների և որակավորումների ակադեմիական որակը: Համաձայն Ուղեցույցի՝ հաշվի առնելով ազգային մակարդակում համաձայնեցված չափանիշներն ու գործընթացները՝ յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կարող է ունենալ և՛ իր որակի ու չափորոշիչների, և՛ իր որակի ապահովման համակարգի արդյունավետության ստուգման անկախ համակարգ:
Բարձրագույն կրթության մեջ որակի ապահովմանը և հավատարմագրմանը վերաբերող (պրոֆեսիոնալ) էթիկայի նորմեր Հանրային փաստաթուղթ, որը բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների համար սահմանում է էթիկական վարվելակերպի և որոշումների ընդունման շրջանակ: Հանդիսանալով բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման գործում թափանցիկություն և համեմատելիություն ապահովող արդյունավետ գործիք, էթիկայի նորմերը սովորաբար բաղկացած են մի շարք հիմնական սկզբունքներից, արժեքներից և գործունեության կանոններից: Սրանք պետք է դիտվեն որպես հղման կետեր՝ որակի ապահովման և հավատարմագրման գործընթացներում՝ Կոդեքսի հետ համապատասխանությունը ապահովող մի շարք ընթացակարգային կանոնակարգերին զուգահեռ: Համապատասխանեցվելով տվյալ ուսումնական հաստատության կարիքներին և արժեքներին՝ էթիկայի կոդեքսները կարող են անդրադառնալ այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ շահերի բախումը, գաղտնիությունը, մտավոր կարողությունը, մշտական զարգացումը, վստահությունը և այլն:
Ճանաչողական կարողություններ Կարողություններ, որոնք նպաստում են անհատական գիտելիքի ձևավորմանը՝ հանդիսանալով այդ գիտելիքի արդյունավետ տեղայնացմանը նպաստող գործոն: Ներառում են այնպիսի կարողություններ, ինչպիսիք են՝ փաստարկելու, տեղեկատվություն հավաքելու, տեղեկատվությունը վերլուծելու, համակարգային մտածողության և ձևաչափերը ճանաչելու, տեսությունը ընկալելու, խնդիրները լուծելու, որոշումներ ընդունելու, ծրագրելու և նպատակներ սահմանելու կարողությունները:

Competencies A specific and measurable pattern of behaviors and knowledge that generates or predicts a high performance level in a given position or context of responsibilities. They account for the identification and application of ideas and solutions in order to solve problems with maximum efficiency and minimum use of resources.
Content Standards Level of core competencies, relevant knowledge, and skills within a subject area, i.e. everything a student should know and be able to do. Content standards shape what goes into the curriculum and refer to required inputs.
Course Development Benchmarks Guidelines regarding the minimum standards that are used for course design, development, and delivery.
Credits A credit is an agreed upon quantified means of expressing the level of learning based on the achievement of learning outcomes and their associated workloads. Generally, once gained, credit cannot be lost. Credit may have a relative value (as the case when they were first introduced) or absolute value (when they made the shift to an accumulation system - no longer calculated on an ad hoc proportional basis but on the basis of officially recognized criteria - that is the official length of a degree programme or unit).
Criteria Checkpoints or benchmarks determining the attainment of certain objectives and/or standards. Criteria describe to a certain degree of detail the characteristics of the requirements and conditions to be met (in order to meet a standard) and therefore provide the (quantitative and qualitative) basis on which an evaluative conclusion is drawn.

Կարողություններ Վարքի և գիտելիքի առանձնահատուկ և չափելի շրջանակ, որը կատարողականության բարձր մակարդակ է ապահովում տվյալ պաշտոնի կամ պատասխանատվությունների շրջանակի համատեքստում: Դրանք պատասխանատու են գաղափարների և լուծումների նույնականացման /բացահայտման/ և կիրառման համար, խնդիրները առավելագույնս արդյունավետ և ռեսուրսների նվազագույն օգտագործմամբ լուծելու նպատակով:
Բովանդակության չափորոշիչներ Որոշակի առարկայական խմբի սահմաններում հիմնական կարողությունների, համապատասխան գիտելիքների և հմտությունների մակարդակ. այն ամենը, ինչ ուսանողը պետք է իմանա և կարողանա անել: Բովանդակության չափորոշիչները սահմանում են, թե ինչը պետք է մտնի ուսումնական պլանի մեջ՝ անդրադառնալով ցանկալի ներդրումներին:
Դասընթացի մշակման բենչմարքեր Դասընթացի մշակման, զարգացման և մատուցման համար նվազագույն չափորոշիչների ուղեցույցեր:
Կրեդիտներ Կրեդիտը համաձայնեցված, չափելի միավոր է, որն արտահայտում է ուսումնառության մակարդակը՝ հիմնվելով ձեռք բերված ուսումնառության արդյունքների և դրանց հետ կապված ծանրաբեռնվածության վրա: Որպես կանոն, ձեռք բերված կրեդիտները հնարավոր չէ կորցնել: Կրեդիտը կարող է ունենալ հարաբերական արժեք (երբ կրեդիտները առաջին անգամ ներկայացվեցին) կամ բացարձակ արժեք (երբ բուհերն անցան կրեդիտների կուտակման համակարգի. այլևս կրեդիտները չէին հաշվվում համեմատական սկզբունքներով, այլ պաշտոնապես ճանաչված չափորոշիչների հիման վրա, այն է՝ աստիճանի ծրագրի կամ միավորի պաշտոնական տևողության վրա):
Չափանիշներ Ստուգման կետեր կամ բենչմարքեր, որոնք սահմանում են որոշակի նպատակների և/կամ չափորոշիչների իրականացումը: Չափանիշները որոշակի մանրամասնությամբ նկարագրում են սահմանված պահանջների առանձնահատկությունները և պայմանները, որոնք պետք է բավարարվեն (չափորոշիչը բավարարելու համար)՝ հետևաբար ապահովելով հիմքեր (քանակական և որակական) գնահատման եզրակացության համար:

Course Development Benchmarks
Guidelines regarding the minimum standards that are used for course design, development, and delivery.

Credits
A credit is an agreed upon quantified means of expressing the level of learning based on the achievement of learning outcomes and their associated workloads. Generally, once gained, credit cannot be lost. Credit may have a relative value (as the case when they were first introduced) or absolute value (when they made the shift to an accumulation system - no longer calculated on an ad hoc proportional basis but on the basis of officially recognized criteria - that is the official length of a degree programme or unit).

Criteria
Checkpoints or benchmarks determining the attainment of certain objectives and/or standards. Criteria describe to a certain degree of detail the characteristics of the requirements and conditions to be met (in order to meet a standard) and therefore provide the (quantitative and qualitative) basis on which an evaluative conclusion is drawn.

Culture of Evidence
As it relates to institutional quality culture, the culture of evidence is a mindset acquired in a higher education institution and based on clear ethical values, principles, and rules, which consists of the self-evaluation of its learning outcomes, engaging the teaching staff and the academic administration in a thoughtful, regular collection, selection, and use of relevant institutional performance indicators, in order to inform and prove, whenever (and to whomever) necessary, that it is doing well in specific areas (e.g. institutional planning, decisionmaking, quality, etc.) and for the purpose of improving its learning and teaching outcomes. The “culture of evidence” (as opposed to “a culture of professional tradition and trust”) is the empirical basis for the quality culture of a higher education institution. As formulated within the new WASC (Western Association of Schools and Colleges) standards, the culture of evidence requested from a higher education institution implies that the institution is encouraged to be able to provide empirical data proving the consistency of its own mission.

Դասընթացի մշակման բենչմարքեր
Դասընթացի մշակման, զարգացման և մատուցման համար նվազագույն չափորոշիչների ուղեցույցեր:

Կրեդիտներ
Կրեդիտը համաձայնեցված, չափելի միավոր է, որն արտահայտում է ուսումնառության մակարդակը՝ հիմնվելով ձեռք բերված ուսումնառության արդյունքների և դրանց հետ կապված ծանրաբեռնվածության վրա: Որպես կանոն, ձեռք բերված կրեդիտները հնարավոր չէ կորցնել: Կրեդիտը կարող է ունենալ հարաբերական արժեք (երբ կրեդիտները առաջին անգամ ներկայացվեցին) կամ բացարձակ արժեք (երբ բուհերն անցան կրեդիտների կուտակման համակարգի. այլևս կրեդիտները չէին հաշվվում համեմատական սկզբունքներով, այլ պաշտոնապես ճանաչված չափորոշիչների հիման վրա, այն է՝ աստիճանի ծրագրի կամ միավորի պաշտոնական տևողության վրա):

Չափանիշներ
Ստուգման կետեր կամ բենչմարքեր, որոնք սահմանում են որոշակի նպատակների և/կամ չափորոշիչների իրականացումը: Չափանիշները որոշակի մանրամասնությամբ նկարագրում են սահմանված պահանջների առանձնահատկությունները և պայմանները, որոնք պետք է բավարարվեն (չափորոշիչը բավարարելու համար)՝ հետևաբար ապահովելով հիմքեր (քանակական և որակական) գնահատման եզրակացության համար:

Փաստերի վրա հիմնված մշակույթ
Փաստերի վրա հիմնված մշակույթը, որը վերաբերում է ինստիտուցիոնալ որակի մշակույթին, բարձրագույն ուսումնական հաստատություններում որդեգրված մոտեցում է, որը հիմնված է հստակ բարոյական արժեքների, սկզբունքների ու կանոնների վրա: Մասնագիտական ուսումնական հաստատությունը պարբերաբար կատարում է իր ուսումնառության արդյունքների ինքնագնահատում՝ ներգրավելով իր պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և վարչակազմը ինստիտուցիոնալ կատարողականի ցուցիչների խելամիտ և կանոնավոր հավաքման, ընտրության և կիրառման գործին, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, ապացուցի իր արդյունավետ գործունեությունը որոշակի բնագավառներում (ինստիտուցիոնալ պլանավորում, որոշումների ընդունում, որակ և այլն) և բարելավի իր ուսումնառության և ուսուցման արդյունքները: «Փաստերի վրա հիմնված մշակույթը» բարձրագույն ուսումնական հաստատության որակի մշակույթի հիմքն է՝ հիմնված փորձի վրա: Ինչպես ձևակերպվում է Դպրոցների և քոլեջների արևմտյան ասոցիացիայի (WASC) նոր չափորոշիչներում, մասնագիտական ուսումնական հաստատություններից պահանջվող փաստերի վրա հիմնված մշակույթը ենթադրում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությանը հնարավորություն է տրվում ունենալու փորձի վրա հիմնված տվյալներ՝ որոնք ապացուցում են իր սեփական առաքելության հետևողականությունը:

D
Day and Evening Courses System A system that may be used by a faculty to provide both day and night courses in order to increase the number of classes from which students may choose. Graduate schools can provide day and evening courses under the Special Programs for Teaching.
Department A basic organizational unit for education and research, below the level of a faculty.
Diploma Course A course which offers one year or more of graduate education that requires completion of an undergraduate program or equivalent academic ability, for providing deepened and specialized education and supervising students' research activities (e.g. Diploma course for special support education teachers).
Doctoral Program A five-year graduate program that leads to a Doctoral Degree. Currently the following forms are considered acceptable under the Standards for the Establishment of Graduate Schools: 1) Doctoral programs consisting of a two-year first stage program (generally called "master's program") and a three-year program following that, 2) Doctoral Programs with no separation (called a "consistent five-year system"), 3) Doctoral Programs composed of third-year (second stage) programs only. The terms for doctoral programs in medicine, veterinary medicine, dentistry and certain parts in pharmacy are stipulated as four years.

Ցերեկային և երեկոյան դասընթացների համակարգ Համակարգ, որը կարող է կիրառվել ֆակուլտետի կողմից և՛ ցերեկային, և՛ երեկոյան դասընթացներ ապահովելու համար՝ դասընթացների քանակը ավելացնելու նպատակով: Հետբուհական մասնագիտական կրթություն ապահովող հաստատությունները կարող են տրամադրել ցերեկային և երեկոյան դասընթացներ համապատասխան ուսուցման հատուկ ծրագրերի:
Բաժին/ Ամբիոն Կրթության և հետազոտության հիմնական կազմակերպչական միավոր, որը ցածր է ֆակուլտետի մակարդակից:
Դասընթաց դիպլոմավորված ուսանողի համար Դասընթաց, որը տալիս է մեկ տարի կամ ավել տևողությամբ բուհական մասնագիտական կրթություն, որը պահանջում է բակալավրական ծրագրի ավարտ կամ համապատասխան կրթական կարողության ձեռքբերում ուսանողի կողմից, ուսանողին ավելի խորը և մասնագիտացված կրթություն տալու և գիտահետազոտական գործունեությունը ղեկավարելու համար (օրինակ՝ դիպլոմի ստացմամբ ավարտվող դասընթացներ հատուկ աջակցության կրթության ուսուցիչների համար):
Դոկտորական ծրագիր Հինգ տարի տևողությամբ կրթական ծրագիր, որի արդյունքնում շնորհվում է Դոկտորի աստիճան: Ներկայումս ընդունվում են Դոկտորական ծրագրի հետևյալ տեսակները՝ համաձայն Աստիճանաշնորհող ուսումնական հաստատությունների հիմնադրման չափորոշիչների. 1) Դոկտորական ծրագրեր, որոնք կազմված են առաջին փուլի երկամյա ծրագրից (սովորաբար անվանվում է «մագիստրոսական ծրագիր») և դրան հաջորդող եռամյա ծրագրից 2) Դոկտորական ծրագրեր առանց որևէ ընդհատման («ամբողջական հնգամյա համակարգ») 3) Դոկտորական ծրագրեր՝ կազմված միայն եռամյա ծրագրից: Բժշկության, անասնաբուժության, ատամնաբուժության և դեղագործության որոշակի ուղղություններում գործում է Դոկտորական ծրագրերի չորսամյա համակարգ:

Duration of Accreditation

Accreditation decisions are limited in time. The duration of validity of the accreditation license is established by the accrediting body, which generally holds the right to suspend or to renew the license, upon the satisfactory resolution of any identified issues.

E

ECTS (European Credit Transfer and Accumulation System)

The main transparency tool for the recognition of study periods, ECTS is a student-centered system based on the student workload required to achieve the objectives of a programme of study specified in terms of learning and competencies to be acquired. As a European Community project initially established under the ERASMUS Programme (1988-1995) ECTS was developed more broadly between 1995-1999 under the higher education component of the SOCRATES Programme, ERASMUS, and proved to be an effective tool for creating curricular transparency and facilitating academic recognition. The activity of ECTS is two-fold: on the one hand, it guarantees academic recognition to students of studies completed abroad and simultaneously enables studies abroad; on the other hand, it provides higher education institutions with curricular transparency by offering detailed information regarding the respective curricula and their relevance for earned degrees and by enabling higher education institutions to preserve their autonomy and responsibility for all decisions regarding student achievement. The Bologna Declaration takes ECTS as the common framework for curriculum design and student mobility within the envisaged European Higher Education Area.

Հավատարմագրի տևողության ժամկետը

Ուսումնական հաստատությանը տրվում է հավատարմագրվածի կարգավիճակ՝ սահմանափակ ժամանակահատվածով: Հավատարմագրի վավերականության ժամկետը սահմանվում է հավատարմագրող մարմնի կողմից, ում էլ իրավունք է վերապահված երկարաձգել կամ նորացնել հավատարմագրվածի կարգավիճակը՝ ի հայտ եկած խնդիրների բավարար լուծման դեպքում:

Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ

Ուսումնառության ժամանակահատվածների ճանաչման համար թափանցիկություն ապահովող հիմնական գործիք: Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը ուսանողակենտրոն համակարգ է՝ հիմնված ուսանողների ծանրաբեռնվածության վրա, որն անհրաժեշտ է կրթական ծրագրով սահմանված նպատակները իրականացնելու համար. այդ նպատակները արտահայտվում են անհրաժեշտ ուսումնառության արդյունքներով և կարողություններով: Լինելով Եվրոպական համայնքի ծրագիր, որն ի սզբանե հիմնադրվել է ERASMUS ծրագրի ներքո (1988-1995), Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը ավելի խորապես մշակվել է 1995-1999թթ SOCRATES և ERASMUS ծրագրերի բարձրագույն կրթությանը վերաբերող բաղադրիչի ներքո և դարձել է արդյունավետ գործիք՝ ուսումնական պլանների թափանցիկությունը ապահովելու և ակադեմիական ճանաչումը առավել մատչելի դարձնելու համար: Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի գործունեությունը երկփեղկված է. մի կողմից այն երաշխավորում է ուսանողների՝ արտասահմանում անցած դասընթացների ճանաչումը և միաժամանակ հնարավոր է դարձնում կրթությունը արտասահմանում, մյուս կողմից այն բարձրագույն ուսումնական հաստատություններին հնարավորություն է ընձեռում ունենալ թափանցիկ ուսումնական պլաններ՝ տրամադրելով մանրակրկիտ տեղեկատվություն համապատասխան ուսումնական պլանների/ ծրագրերի և ձեռք բերվող աստիճաններին դրանց համապատասխանության վերաբերյալ, և դրանով իսկ հնարավորություն է ընձեռում մասնագիտական ուսումնական հաստատությանը՝ պահել իր ինքնավարությունը և ուսանողների ձեռքբերումներին վերաբերող բոլոր որոշումների ընդունման պատասխանատվությունը: Բոլոնիայի հռչակագիրը դիտում է Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը

Educational Effectiveness An output of specific analyses that measure (the quality of) the achievement of a specific educational goal or the degree to which a higher education institution can be expected to achieve specific requirements. It is different from efficiency, which is measured by the volume of output or input used. As a primary measure of success of a programme or of a higher education institution, clear indicators, meaningful information, and evidence best reflecting institutional effectiveness with respect to student learning and academic achievement have to be gathered through various procedures (inspection, observation, site visits, etc.). Engaging in the measurement of educational effectiveness creates a value-added process through quality assurance and accreditation reviews and contributes to building, within the institution, a culture of evidence.
Educational Efficiency An ability to perform well or to achieve a result without waste of resources, effort, time, or funds (using the smallest quantity of resources possible). Educational efficiency can be measured in physical terms (technical efficiency) or in terms of cost (economic efficiency). Increased educational efficiency is achieved when the same amount and standard of educational services are produced at a low cost, if a more useful educational activity is substituted for a less useful one at the same cost, or if unnecessary educational activities are eliminated. A programme or a higher education institution may be efficiently managed, but not effective in achieving its mission, goals, or objectives.

որպես ուսումնական պլանների մշակման և Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ուսանողների շարժունությունը ապահովող շրջանակ:
Կրթության արդյունավետություն Որոշակի վերլուծությունից ստացված արդյունք, որը չափում է, թե որքանով է իրականացվել սահմանված կրթական նպատակը կամ որքանով է բարձրագույն ուսումնական հաստատությունը բավարարում որոշ պահանջներ: Արդյունավետությունը տարբերվում է գործունակությունից. վերջինս չափվում է՝ կախված ստացված արդյունքի կամ կատարված ներդրման ծավալից: Որպես բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի հաջողության չափման առաջնային միջոց՝ պետք է զանազան գործընթացների (վերստուգում, դիտարկում, ստուգայց ուսումնական հաստատություն) միջոցով հավաքվեն ինստիտուցիոնալ արդյունավետությունը՝ ուսանողների ուսումնառությունը և կրթական ձեռքբերումները, արտահայտող հստակ ցուցիչներ, խելամիտ տեղեկատվություն և փաստեր: Կրթական արդյունավետությունը չափելու գործընթացի մեջ ներգրավվելը ձևավորում է հավելյալ արժեք ստեղծող մի գործընթաց՝ որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների վերանայման միջոցով և իր ավանդն է ներդնում ուսումնական հաստատությունում ապացույցների մշակույթի ստեղծմանը:
Կրթության գործունակություն Արդյունավետ գործելու կամ որոշակի արդյունքի հասնելու կարողություն՝ առանց ռեսուրսներ, ջանքեր, ժամանակ և միջոցներ վատնելու (օգտագործելով ռեսուրսների հնարավոր փոքրագույն չափաբաժինը): Կրթության գործունակությունը կարող է չափվել ֆիզիկական տեսանկյունից (տեխնիկական գործունակություն) և արժեքային տեսանկյունից (տնտեսական գործունակություն): Կարելի է հասնել կրթության բարձր գործունակության, երբ կրթական ծառայությունների նույն քանակն ու չափորոշիչները ապահովվում են ցածր գնով, երբ նույն արժեքի սահմաններում առավել օգտակար ուսումնական գործընթացը փոխարինում է ավելի քիչ օգտակար գործընթացին, կամ երբ վերացվում են ոչ անհրաժեշտ ուսումնական գործընթացները: Կրթական ծրագիրը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը կարող են ունենալ գործունակ կառավարում, բայց արդյունավետ չլինեն սահմանված առաքելությունը, նպատակները կամ խնդիրները իրականացնելու համար:

Educational Standards
Level of requirements and conditions regarding different stages of the educational process and the relationship between those stages, such as inputs, processes, and outputs. Various types of educational standards exist with regard to learning resources, programmes, and results, in general, and student performance (content standards, performance standards, proficiency standards, and opportunity-to-learn standards).

European Qualifications Framework
A new development in higher education, the European Qualifications Framework for lifelong learning (EQF) is the targeted result of a European Commission initiative to be enacted by the European Parliament and Council in 2007. It focuses on a set of eight general reference levels or learning outcomes that cover the whole range of qualifications and are valid on a trans-systemic basis. The EQF should provide stakeholders and employers with a global reference tool (or 'translation device') allowing them to clearly compare and relate qualifications and education and training systems.

European standards
(i) *for internal quality assurance within higher education institutions*
Policies and procedures for quality assurance; approval, monitoring and periodic review of programmes and awards; assessment of students; quality assurance of teaching staff; learning resources and student support; information system;
public information (as identified by ENQA).

Կրթական չափորոշիչներ
Պահանջների և պայմանների որոշակի մակարդակ, որը վերաբերում է ուսումնական գործընթացի տարբեր փուլերին և դրանց միջև հարաբերություններին՝ ներդրում, գործընթաց և արդյունք: Գոյություն ունեն ուսումնական ռեսուրսներին, ծրագրերին և, առհասարակ, արդյունքներին, ուսանողների առաջադիմությանը վերաբերող կրթական չափորոշիչներ (բովանդակության չափորոշիչներ, կատարողականի չափորոշիչներ, կարողությունների չափորոշիչներ և սովորելու հնարավորության չափորոշիչներ):

Որակավորումների եվրոպական շրջանակ
Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը (ՈԵՇ)՝ լինելով մի նոր զարգացում բարձրագույն կրթության մեջ, Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնության արդյունքն էր, որն իրականացվել է 2007-ին Եվրոպական պառլամենտի և Եվրոխորհրդի կողմից: Այն կենտրոնանում է 8 ընդհանուր հղման մակարդակների կամ ուսումնառության արդյունքների վրա, որոնք ներառում են որակավորումների ամբողջ ծավալը և ընդունելի են միջհամակարգային տեսանկյունից: ՈԵՇ-ն պետք է շահակիցներին և գործատուներին տրամադրի հղման համընդհանուր մի միջոց (կամ թարգմանող գործիք, որը նրանց թույլ կտա հստակորեն համեմատել և համադրել որակավորումները և ուսումնական ու վերապատրաստման համակարգերը:

Եվրոպական չափորոշիչներ
Ա) Բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ.
քաղաքականություն և ընթացակարգեր կրթական ծրագրերի որակի ապահովման, հավաստման, մշտադիտարկման և պարբերական վերանայման, դիպլոմների, ուսանողների գնահատման, պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման, ուսումնական ռեսուրսների և ուսանողների աջակցության համակարգերի, տեղեկատվական համակարգի, հանրային տեղեկատվության համար (ինչպես սահմանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան):

(ii) *for external quality assurance of higher education* Use of internal quality assurance procedures; the development of external quality assurance processes; criteria for decision; processes fit for purpose; reporting; follow-up procedures; periodic reviews; system wide analysis (as identified by ENQA). (iii) *for external quality assurance agencies* Use of external quality assurance procedures for higher education Official status; activities; resources; mission statement; independence; external quality assurance criteria and processes used by agencies (as identified by ENQA).	
Evaluation Manual Guidelines for external evaluators of accreditation. It covers detailed methodologies on document analyses, site visits and making evaluation reports. Although the manual is written for external evaluators, it is publicly available in order to ensure the fairness and transparency of the evaluation processes.	
Evening Course Courses which are mainly held in the evening under the “day and evening courses system”.	
Evening School A faculty which offers classes entirely in the evening.	
Examination The detailed inspection of conditions for education and research of subject institutions through document analyses and site visits.	

Բ) Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներ. Որակի ներքին ապահովման ընթացակարգերի կիրառում, որակի արտաքին ապահովման գործընթացների մշակում, որոշումների կայացման չափանիշներ, նպատակահարմար գործընթացներ, զեկուցում, հաջորդող գործընթացներ, պարբերական վերանայումներ, համահամակարգային վերլուծություն (ինչպես սահմանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան): *Գ) Եվրոպական չափորոշիչներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար.* Որակի արտաքին ապահովման ընթացակարգերի կիրառում՝ բարձրագույն կրթությանը պաշտոնական կարգավիճակ տալու համար, գործունեություն, ռեսուրսներ, առաքելության սահմանում, անկախություն, որակի արտաքին ապահովման չափանիշներ և գործընթացներ, որոնք կիրառվում են որակի ապահովման գործակալությունների կողմից (ինչպես սահմանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան):	
Գնահատման ձեռնարկ Ուղենիշներ հավատարմագրման գործընթացն իրականացնող արտաքին փորձագետների համար: Այն ընդգրկում է փաստաթղթերի վերլուծության, ուսումնական հաստատություն այցի և գնահատման զեկույցի պատրաստման մանրամասն մեթոդաբանությունը: Չնայած ձեռնարկը գրվում է արտաքին գնահատողների համար, այն հասանելի է հանրությանը՝ գնահատման գործընթացի արդարությունն ու թափանցիկությունը երաշխավորելու համար:	
Երեկոյան դասընթաց Դասընթացներ, որոնք հիմնականում անց են կացվում երեկոյան ժամերին՝ «ցերեկային և երեկոյան դասընթացների համակարգի» շրջանակներում:	
Երեկոյան դպրոց Ուսումնական հաստատություն/ֆակուլտետ, որն անց է կացնում միայն երեկոյան դասընթացներ:	
Ստուգում Ուսումնասիրվող մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառության և հետազոտությունների համար ստեղծված պայմանների մանրակրկիտ ուսումնասիրություն՝ փաստաթղթերի վերլուծության և ուսումնական հաստատություն կատարվող այցերի միջոցով:	

(External) Competitive Benchmarking Benchmarking (comparisons of) performance in key areas, on specific measurable terms, based upon information from institution(s) that are viewed as competitors.
External Evaluation The process whereby a specialized agency collects data, information, and evidence about an institution, a particular unit of a given institution, or a core activity of an institution, in order to make a statement about its quality. External evaluation is carried out by a team of external experts, peers, or inspectors, and usually requires three distinct operations: i. an analysis of a self-study report; ii. a site visit; iii. the drafting of an evaluation report.
External Evaluators People who carry out the actual evaluating process as members of the Subcommittee. They are elected from academics in national, municipal/ prefectural, and private universities or experts such as journalists and economists. A QA agency provides training programs prior to the evaluation to ensure their mutual understanding and the fair, appropriate and smooth implementation of the process.
Extra-Curriculum Activities Student activities on campus, other than academic programs, which contribute to the nurture of rich humanity and widen knowledge. They include club activities, activities in student unions and students' research societies.

F
Faculty A basic organizational unit of a university, for conducting education and research, that students and academic staff belong to. It may also indicate a group of staff for education and research.

(Արտաքին) Մրցակցային Բենչմարքինգ Մրցակից ուսումնական հաստատությունների հիմնական բնագավառների կատարողականության բենչմարքինգ՝ չափելի միջոցներով, որոնք հիմնված են այդ հաստատություններից ստացված տեղեկատվության վրա:
Արտաքին գնահատում Գործընթաց, որով մասնագիտացված գործակալությունը (որակի ապահովման) հավաքում է տվյալներ, տեղեկատվություն և վկայություններ հաստատության, նրա որոշակի միավորի կամ գործունեության հիմնական տարատեսակի մասին՝ նրա որակի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար: Արտաքին գնահատումը իրականացվում է արտաքին փորձագետների խմբի, համանման հաստատությունների ներկայացուցիչների կամ տեսուչների կողմից, և սովորաբար պահանջում է 3 առանձին գործողությունների իրականցում՝ ա) ինքնավերլուծության զեկույցի վերլուծություն, բ) այց՝ գնահատվող մասնագիտական հաստատություն, գ) գնահատման հաշվետվության մշակում:
Արտաքին գնահատողներ Մարդիք, ովքեր իրականացնում են գնահատման գործընթացը որպես Ենթահանձնախմբի անդամներ: Նրանք ընտրվում են տարբեր ազգային, համայնքային/մունիցիպալ և մասնավոր համալսարանների գիտաշխատողներից կամ փորձագետներից, որպիսիք են՝ լրագրողները, տնտեսագետներ և այլն: Որակի ապահովման գործակալությունը պետք է պատրաստի վերապատրաստման ծրագրեր՝ արտաքին գնահատողների թիմի համար նախքան գնահատման գործընթացը սկսելը նրանց փոխըմբռնումը և գործընթացի արդարացի, համապատասխան և հարթ իրականացումը երաշխավորելու համար:
Արտալսարանային գործունեություն Ուսանողական ավաններում ուսանողների գործունեություն, որը տարբերվում է կրթական ծրագրերին մասնակցելուց, և նպաստում է հարուստ մարդկային արժեքների ձևավորմանը և գիտելիքների ընդլայնմանը: Այդպիսի գործունեությունը ներառում է ակումբային գործունեությունը, գործունեությունը ուսանողական միություններում և ուսանողների հետազոտական կենտրոններում:

Ֆակուլտետ Համալսարանի հիմնական կազմակերպչական միավոր՝ ուսուցում և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, որը ներառում է իր պրոֆեսորադասախոսական կազմը ու ուսանողներին: Այն կարող է նաև

Functional (External Collaborative) Benchmarking Benchmarking that involves comparisons of processes, practices, and performances with similar institutions of a larger group of institutions in the same field that are not immediate competitors.
Faculty Development The term is used for the systematic approach by academic staff to improve and develop the university's educational functions. It includes various approaches such as mutual class observations between academic staff, holding workshops on teaching methods, and giving training opportunities for newly employed staff.
Field Study Practical classes conducted out of classrooms or laboratories for increasing the effectiveness of education, such as field researches.

G
Generic Benchmarking A comparison of institutions in terms of a basic practice process or service (e.g. communication lines, participation rate, and drop-out rate). It compares the basic level of an activity with a process in other institutions that has similar activity.
Graduate Program The term refers to master's, doctoral, and professional degree programs, according to the Standards for the Establishment of the Graduate Schools.
Graduate School A graduate school requires a Bachelor's Degree or equivalent academic ability for admission. It offers master's, doctoral and/or professional degree programs and is often located in a university. It may be established without undergraduate programs.

առանձնացնել մի խումբ աշխատողներ, որոնք կզբաղվեն միայն ուսուցումով և հետազոտություններով:
Գործառնական (արտաքին միասնական) բենչմարքինգ Բենչմարքինգի տեսակ, որը ներառում է նույն բնագավառի, սակայն իրար անմիջական մրցակիցներ չհանդիսացող ուսումնական հաստատությունների գործընթացների, փորձի և կատարողականության համեմատությունը:
Ֆակուլտետի զարգացում Համակարգային մոտեցում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ ուղղված ուսումնական հաստատության կրթական գործառույթները բարելավելուն և զարգացնելուն: Այն ներառում է տարատեսակ մոտեցումներ՝ դասալսումներ, ուսուցման մեթոդների վերաբերյալ աշխատաժողովներ, նոր ընդունված աշխատակիցների համար վերապատրաստման հնարավորություններ:
Արտալսարանային ուսուցում Լսարանից կամ լաբորատորիայից դուրս իրականացվող գործնական դասընթաց՝ ուղղված կրթության արդյունավետության բարձրացմանը, ինչպիսին է արտալսարանային ուսուցումը:

Ընդհանուր բենչմարքինգ Ուսումնական հաստատությունների համեմատություն՝ հիմնված հիմնական գործունեության և ծառայությունների վրա (օր.՝ հաղորդակցման ուղիներ, մասնակցության մակարդակ և դուրս մնացած ուսանողների թիվ) և այլն: Այն համեմատում է որևէ հաստատության գործունեության հիմնական մակարդակը մեկ այլ հաստատության նմանօրինակ գործունեության հետ:
Աստիճանաշնորհող ծրագիր Մագիստրոսի, Դոկտորի կամ որակավորում շնորհող ծրագիր՝ համաձայն Աստիճանաշնորհող ուսումնական հաստատությունների հիմնադրման չափորոշիչների:
Աստիճանաշնորհող ուսումնական հաստատություն Աստիճանաշնորհող ուսումնական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ Բակալավրի աստիճան կամ դրան համարժեք կրթական կարողություններ: Այն առաջարկում է Մագիստրոսական, Դոկտորական և/կամ որակավորում շնորհող ծրագրեր և հաճախ տեղակայված է համալսարանի մեջ: Այն կարող է նաև հիմնադրվել՝ չունենալով իրեն նախորդող բակալավրական ծրագիր:

Guidelines for Self-Assessment A document prepared by a QA agency for subject institutions which contains instructions for carrying out self-assessment.
Guidelines for Site Visit A document of instructions for the site-visiting team, which covers specifics from preparation to the tasks to be undertaken during their visit.

H
Higher Education Institution An educational body which carries out higher education activities based on legally approved study programmes. Any higher education organization must follow an external evaluation procedure in order to assess its quality and to acquire the provisional functioning authorisation, followed by its official accreditation, as well as the accreditation of its study programmes. Generally, this requirement is compulsory for all higher education institutions (HEI) or organisations providing higher education programmes and activities and entitles HEIs, upon successful completion, to use the name 'university' or other similar legally recognized names. Also, HEIs have the primary responsibility for the quality of their provision and its assurance. Higher education institutions may differ in size, quality, resources, number of teaching staff and students, etc., as successful HEIs generally have to find a balance between often conflicting stakeholder demands and institutional values. HEIs can therefore be either local or global; elite or mass-oriented; specialized or trans-disciplinary, and may foster either an academic culture (characterized by knowledge creation, scientific excellence, academic freedom and freely shareable results) or a business culture (characterized by profit creation and individual appropriation of social wealth).

Ինքնագնահատման ուղեցույցեր Որակի ապահովման գործակալության կողմից բուհերի համար պատրաստված փաստաթուղթ, որը պարունակում է հրահանգներ ինքնգնահատման գործընթացն իրականացնելու համար:
Ուսումնական հաստատության ստուգայցի ուղենիշներ Հրահանգներ պարունակող փաստաթուղթ, ուսումնական հաստատություն ստուգայց կատարող թիմի համար՝ որը ընդգրկում է նախապատրաստական աշխատանքներից սկսած մինչև ստուգայցի ժամանակ նախատեսված գործողությունների մանրամասները:

Բարձրագույն ուսումնական հաստատություն Ուսումնական հաստատություն, որն իրականացնում է բարձրագույն կրթություն օրենքով հաստատված կրթական ծրագրերի միջոցով: Ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատություն պետք է անցնի արտաքին գնահատում՝ որպեսզի գնահատի իր որակը և ստանա ժամանակավոր գործունեության լիազորություն, որին կհաջորդի ուսումնական հաստատության, ինչպես նաև դրա կրթական ծրագրերի պաշտոնական հավատարմագրումը: Ընդհանրապես, այս պահանջը պարտադիր է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) կամ բարձրագույն կրթություն ապահովող կազմակերպությունների համար և իրավունք է տալիս բուհերին, բարեհաջող հանգուցալուծման դեպքում, կրել համալսարան կամ այլ օրինական ճանաչված անվանում: Բուհերը նաև պատասխանատվություն են կրում իրենց գործունեության որակի և դրա ապահովման համար: Բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են տարբերվել ըստ իրենց մեծության, որակի, ռեուրսների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների քանակի և այլն, քանի որ հաջողակ բուհերը պետք է հավասարակշռություն ստեղծեն հաճախ իրար հետ չհամընկնող շահակիցների պահանջների և ինստիտուցիոնալ արժեքների միջև: Հետևաբար բուհերը կարող են լինել տեղական կամ համընդհանուր, էլիտար կամ մասսայական, մասնագիտացված կամ անդրառարկայական, կարող են որդեգրել կա՛մ կրթական մշակույթ (որը բնութագրվում է գիտելիքների ստեղծմամբ, գիտական կատարելությամբ, ակադեմիական ազատություններով և ազատորեն կիսվող արդյունքներով)կա՛մ բիզնես-մշակույթ (որը բնորոշվում է շահույթի ստեղծմամբ և սոցիալական հարստության անհատական յուրացմամբ):

I
Implicit Benchmarking A quasi-benchmarking that looks at the production and publication of data and of performance indicators that could be useful for meaningful cross-institutional comparative analysis. It is not based on the voluntary and proactive participation of institutions (as in the cases of other types), but as the result of the pressure of markets, central funding, and/or coordinating agencies. Many of the current benchmarking activities taking place in Europe are of this nature.
Indicators Operational variables referring to specific empirically measurable characteristics of higher education institutions or programmes on which evidence can be collected that allows for a determination of whether or not standards are being met. Indicators identify performance trends and signal areas in need of action and enable comparison of actual performance with established objectives. They are also used to translate theoretical aspects of quality into procedures, a process known as operationalization. An indicator must be distinguished from a measure, which is data used to determine the level of performance of an attribute of interest, and from a standard, which is the level of acceptable performance in terms of a specific numeric criterion. Another distinction is made between the different types of indicators: indicators of economy; indicators of efficiency; and indicators of effectiveness. A third and relatively consequent distinction is made between: (i) context indicators, that relate to the specific environment of a higher education institution or programme (social, economic, political, geographical, etc.); (ii) input indicators, that relate to the logistical, human, and financial resources used by a higher education institution; (iii) process indicators, that refer to the use of resources by a higher education institution, to the management of the inputs, and to the functioning of the organization; and (iv) output indicators, that concern the actual achievements or products of the higher education institution. This latter framework is also known as the CIPO-model (i.e. Context, Inputs, Process, Outputs), frequently used in evaluation studies.

Քողարկված բենչմարքինգ Բենչմարքինգի տեսակ, որը կենտրոնանում է այն տվյալների և կատարողականի ցուցիչների պահպանման և հրապարակման վրա, որոնք կարող են նպաստել խելամիտ միջբուհական համեմատական վերլուծությանը: Այն հիմնված է ոչ թե բուհերի կամավոր և պրոակտիվ մասնակցության (ինչպես բենչմարքինգի այլ տեսակների դեպքում), այլ աշխատաշուկայի ճնշման, կենտրոնական ֆինանսավորման և համագործակից գործակալությունների ազդեցության վրա: Եվրոպայում իրականացվող բենչմարքինգի շատ գործընթացներ ունեն այսպիսի բնույթ:
Ցուցիչներ Գործառնական փոփոխականներ, որոնք հղում են կատարում բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ կրթական ծրագրերի որոշակի չափելի բնութագրիչներին, որոնց հիման վրա կարելի է հավաքել ապացույցներ, որոնք հավաստում են, թե արդյոք չափորոշիչները պահպանվում են թե ոչ: Ցուցիչները սահմանում են կատարողականի միտումները և խնդրահարույց բնագավառները, ինչպես նաև հնարավորություն են ընձեռում համեմատելու առկա կատարողականությունը սահմանված նպատակների հետ: Ցուցիչները նաև կիրառվում են որակի հետ կապված տեսական կետերը իրագործելիս՝ դրանք դարձնելով ընթացակարգեր. այս գործընթացը կոչվում է գործառնականացում: Ցուցիչը պետք է տարբերակվի չափման միավորից, որը որոշում է հետաքրքրության առարկայի կատարողականության մակարդակը, ցուցիչը պետք է տարբերվի նաև չափորոշիչից, որն կատարողականության ընդունելի մակարդակն է՝ չափված որոշակի թվային չափանիշներով: Տարբերակվում են նաև ցուցիչների տարբեր տեսակները՝ տնտեսական, կրթության գործունակության և կրթության արդյունավետության ցուցիչներ: Երրորդ և տրամաբանորեն հաջորդական տարբերությունը դրվում է ցուցիչների հետևյալ տեսակների միջև՝ ա) համատեքստի ցուցիչներ, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որևէ առանձնահատուկ միջավայրին (սոցիալական, տնտեսական, քաղաքական, աշխարհագրական և այլն); բ) ներդրման ցուցիչներ, որը վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատության կողմից օգտագործվող նյութատեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներին; գ) գործընթացի ցուցիչներ, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ռեսուրսների օգտագործմանը, ներդրումների կառավարմանը, և կազմակերպության գործելուն; և դ)արդյունքի ցուցիչներ, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության իրական նվաճումներին կամ «արտադրանքին»: Այս շրջանակը նաև հայտնի է որպես ԲՆԳԱ մոդել

Institutional Accreditation The terms refer to the accreditation of an entire institution, including all its programmes, sites, and methods of delivery, without any implication to the quality of the study programmes of the institution.
Institutional Audit/Institutional Review An evidence-based process carried out through peer review that investigates the procedures and the mechanisms by which an institution ensures its quality assurance and quality enhancement. When it specifically addresses the final responsibility for the management of quality and standards that rests with an institution as a whole, the process is called an institutional review.
Institutional Evaluation Evaluation of an institution as a whole, analyzing the effectiveness of the institution.
Internal Audit There are currently three main modes for the provision of internal audit within higher education: (i) in-house teams employed as staff members by the respective institutions; (ii) audit consortia (which may provide services to a number of clients both within and outside the sector); and (iii) accountancy firms that undertake internal audits.
Internal Benchmarking Benchmarking (comparisons of) performances of similar programmes in different components of one higher education institution. Internal benchmarking is usually conducted at large decentralized institutions with several departments (or units) conducting similar programmes.
Internship A system that enables students to have working experience related to their major or future career. “Externship”, a synonymous term of internship, may be referred to as a practical training program provided by law schools as part of their curriculum.

(բովանդակություն, ներդրում, գործընթաց, արդյունք) և հաճախ օգտագործվում է գնահատման ուսումնասիրությունների ժամանակ:
Ինստիտուցիոնալ հավատարմագրում Ընդհանուր ուսումնական հաստատության հավատարմագրում, որը ներառում է հաստատության բոլոր բաժինները, ծրագրերը և մատուցման մեթոդները՝ առանց որևէ հետևանքի ուսումնական հաստատության կրթական ծրագրերի որակի համար:
Ինստիտուցիոնալ փորձաքննություն/ Ինստիտուցիոնալ վերանայում Ապացույցների վրա հիմնված գործընթաց, որը իրականացվում է փոխգնահատման միջոցով. փոխգնահատման արդյունքում երևում են այն ընթացակարգերն ու մեխանիզմները, որոնց միջոցով մասնագիտական ուսումնական հաստատությունը երաշխավորում է իր որակի ապահովումն ու զարգացումը: Երբ ինստիտուցիոնալ փորձաքննությունը վերաբերում է որակի և չափորոշիչների ապահովման վերջնական պատասխանատվությանը, որն ընկած է ողջ հաստատության վրա, այս գործընթացը կոչվում է ինստիտուցիոնալ վերանայում:
Ինստիտուցիոնալ գնահատում Ամբողջական ուսումնական հաստատության գնահատում, որը վերլուծում է վերջինիս գործունեության արդյունավետությունը:
Ներքին փորձաքննություն Գոյություն ունի մասնագիտական ուսումնական հաստատությունում ներքին փորձաքննության անցկացման երեք հիմնական եղանակ՝ ա) համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կողմից վարձված աշխատակազմ; բ) փորձաքննության կոնսորցիումներ (որոնք կարող են ծառայություններ մատուցել մի շարք հաճախորդների թե՛ այս բնագավառի սահմաններում, թե՛ դրանից դուրս); և գ) հաշվապահական ֆիրմաներ, որոնք իրականացնում են ներքին փորձաքննություն:
Ներքին բենչմարքինգ Որևէ բարձրագույն ուսումնական հաստատության շրջանակներում նմանատիպ ծրագրերի իրականացման բենչմարքինգ: Ներքին բենչմարքինգը սովորաբար իրականացվում է մեծ բազմաճյուղ ուսումնական հաստատություններում, որն ունի նմանատիպ ծրագրեր իրականացնող մի քանի բաժիններ:
Պրակտիկա Համակարգ, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին իրենց հիմնական կամ ապագա կարիերային վերաբերող աշխատանքային փորձ ձեռք բերել: «Պրակտիկան (Externship)»՝ ինտերնատուրայի հոմանիշ հասկացությունը,

Introductory Education
Supplementary higher education offered to students prior to or in the first year after entering a higher education institution to ensure a smooth transition from secondary education and increasing the effectiveness of regular programs. Recently, various introductory education schemes have been introduced such as upper secondary school students experiencing university classes.

J

Junior College
A college which offers two or three-year higher education and requires graduation from upper secondary schools or equivalent academic ability for admission. Students who graduate from junior colleges are awarded an Associate Degree.

L

Learning Support
A comprehensive support system in higher education institutions which enables students to concentrate in studying effectively, such as guidance for taking courses, student counseling and advice.

Level Descriptor
Level descriptors are statements that provide a broad indication of learning relevant to the achievement of a particular level, describing the characteristics and context of learning expected at that level. They are designed to support the review of specified learning outcomes and assessment criteria in order to develop particular modules and units and to assign credits at the appropriate level.

նշանակում է գործնական վերապատրաստման ծրագիր՝ իրականացված իրավաբանական ֆակուլտետի կողմից որպես իրենց ուսումնական պլանի մաս:

Նախապատրաստական կրթություն
Ուսանողներին առաջարկվող լրացուցիչ բարձրագույն կրթություն, որը նախորդում է մասնագիտական կրթությանը կամ մատուցվում է մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջին տարում՝ միջնակարգ կրթությունից մասնագիտականին հարթ անցումը ապահովելու և կանոնավոր ծրագրերի արդյունավետությունը երաշխավորելու նպատակով: Վերջերս, ներկայացվել են նախնական կրթության զանազան ծրագրեր, ինչպիսին է ավագ դպրոցի ավարտական դասարաններում սովորող ուսանողի՝ համալսարանական դասերին մասնակցելը:

Կրտսեր քոլեջ
Քոլեջ, որն առաջարկում է երկամյա կամ եռամյա բարձրագույն կրթություն և ընդունելության համար պահանջում է միջնակարգ կրթություն կամ համարժեք կրթական կարողություն: Կրտսեր քոլեջ ավարտող ուսանողներին շնորհվում է կրտսեր մասնագետի աստիճան:

Ուսումնական աջակցություն
Բարձրագույն ուսումնական հաստատություններում գործող համապարփակ աջակցության համակարգ, որն ուսանողներին հնարավորություն է ընձեռում կենտրոնանալ արդյունավետ ուսուցման վրա, օրինակ՝ դասընթացներն անցնելու ուղեցույցեր և խորհրդատվություններ ուսանողների համար:

Մակարդակի բնութագրիչներ
Սահմանումներ, որոնք որոշում են որոշակի մակարդակում ձեռքբերումներին համապատասխանող ուսումնառությունը՝ բնութագրելով այդ մակարդակից ակնկալվող ուսումնառության արդյունքներն ու դրանք ստանալու համատեքստը: Նրանք մշակված են այնպես, որպեսզի հեշտացնեն որոշակի ուսումնառության արդյունքների և գնահատման չափանիշների վերանայումը՝ համապատասխան մակարդակում կրեդիտներ սահմանելու համար:

Licensing
The process by which a governmental agency grants official permission (i) to persons meeting pre-determined qualifications to engage in a given occupation and/or use of a particular title; (ii) to programmes, based on the evaluation of appropriate plans, to operate before obtaining accredited status, and (iii) to institutions to perform specified functions. Licensing (in the case of persons) is usually obtained through examination or graduation from an accredited institution. In some countries, a period of practical experience may be required. In such a case, state licensing should not be confused with institutional or specialized accreditation.

M

Management Audit
A management audit reviews the general management, policy, and policy-making of a given institution.

Management Expenses Grants
Grants from the government to national university corporations supplied every fiscal year. The rate of allocation is affected by the results of the national university corporation evaluation.

Master's Program
A two-year graduate program at a higher level than the bachelor's. Students who complete a master's program are awarded a Master's Degree. In the context of a five-year doctoral program, it means the first two years of the curriculum leading to a Master's Degree. In this case, it is also called a "first stage doctoral program".

Measurable Outcomes
Results that can be quantified; all measures of student outcomes (except certain subjective learning achievements), including executive function skills, and

Լիցենզավորում
Գործընթաց, որի միջոցով կառավարական մարմինը պաշտոնական թույլտվություն է շնորհում ա) անհատներին, ովքեր համապատասխանում են նախասահմանված որակավորումներին՝ ներգրավվելու որոշակի գործընթացի մեջ կամ օգտագործելու որոշակի կոչում, բ) կրթական ծրագրերին՝ գործելու, մինչև հավատարմագրման կարգավիճակ ստանալը, ինչը հիմնված է համապատասխան ծրագրերի գնահատման վրա, գ) ուսումնական հաստատություններին՝ իրագործելու որոշակի գործառույթներ: Անհատների դեպքում լիցենզավորումը սովորաբար շնորհվում է քննության կամ հավատարմագրված հաստատություն ավարտելու դեպքում: Որոշ երկրներում կարող է պահանջվել գործնական փորձ. այսպիսի դեպքերում պետական լիցենզավորումը չպետք է շփոթել ինստիտուցիոնալ կամ մասնագիտացված հավատարմագրման հետ:

Կառավարման փորձաքննություն
Կառավարման փորձաքննությունը ուսումնասիրում է տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության ընդհանուր կառավարումը, քաղաքականությունը և դրա իրականացումը:

Կառավարման ծախսերի դրամաշնորհային ծրագրեր
Յուրաքանչյուր ֆինանսաբյուջետային տարի կառավարությունից ազգային համագործակցող համալսարաններին շնորհվող դրամաշնորհային ծրագրեր: Բաշխման չափաբաժինը որոշվում է ազգային համալսարանական միության գնահատման արդյունքում:

Մագիստրոսական ծրագիր
Երկամյա ավարտական ծրագիր, որը հաջորդում է բակալավրական ծրագրին: Մագիստոսական ծրագիրն ավարտած ուսանողներին տրվում է մագիստրոսի աստիճան: Հնգամյա դոկտորական ծրագրի համատեքստում մագիստրոսական ծրագիր ասելով հասկանում են ուսումնական ծրագրի առաջին երկու տարին, որը բերում է Մագիստրոսի աստիճանի: Այս պարագայում, այն նաև կոչվում է Դոկտորական ծրագրի առաջին փուլ:

Չափելի արդյունքներ
Արդյունքներ, որոնք հնարավոր է հաշվել. ուսանողների ձեռքբերումների ամբողջական չափում (բացառությամբ որոշակի սուբյեկտիվ ուսումնական

affective-related measures. Examples of measurable outcomes include: numbers of persons who gain employment, numbers of people who register to vote, and numbers of people who achieve a graduate education degree. Learning achievements concern speaking, listening, reading, writing, and numeracy. Executive function skills include problem-solving, critical thinking, and meta-cognition. Affective-related measures include self-esteem, self-confidence, and interpersonal communication.

Meta-Evaluation
The assessment of the quality of evaluation itself. It is used to assess the effectiveness of the evaluation being carried out and the evaluators' performance.

Mutual Recognition
Agreement by two or more institutional bodies to validate each other's degrees, programmes, or institutions and affirmation by two or more quality assurance or accrediting agencies that the
methodology of the agencies are sound and that the procedures are functioning accordingly.

N

National Qualifications Framework
Generally, a National Qualifications Framework (NQF) is designed to provide nationally recognized and homogeneous standards and qualifications, as well as recognition for all learning of knowledge and competencies and a basis for further review, articulation and development of existing and impending qualifications. Also, among other purposes, it should facilitate curricular change and allow for the improvement of access and social inclusion, as well as the integration of changing societal needs. A National Qualifications Framework is primarily developed through a medium-term process of policy development and public consultation. The NQFs in the European Higher Education Area are expected to be convergent by taking as reference the European Qualifications Framework.

նվաճումների)՝ ներառյալ գործնական կարողությունները և անձնային հատկությունները: Չափելի ուսումնառության արդյունքների օրինակներ են՝ աշխատանքի տեղավորված մարդկանց քանակը, քվեարկելու համար գրանցվածների քանակը, դիպլոմավորված մասնագետի կոչում ստացած մարդկանց քանակը և այլն: Ուսումնական նվաճումները վերաբերում են խոսելու, լսելու, կարդալու, գրելու և թվաբանական գործողություններ կատարելու կարողություններին: Գործնական հմտությունները ներառում են խնդիրներ լուծելու կարողությունը և խոր ու վերլուծական մտածելակերպը: Անձնային հատկությունները ներառում են ինքնագնահատումը, ինքնավստահությունը և միջանձնական հաղորդակցությունը:

Մետա-գնահատում
Գնահատման անմիջական գործընթացի գնահատում: Այս գործընթացը կիրառվում է իրականացվող գնահատումը և գնահատողի կատարողականությունը գնահատելու նպատակով:

Փոխճանաչում
Համաձայնագիր երկու կամ ավելի ուսումնական հաստատությունների միջև, ըստ որի նրանք վավերացնում են մեկը մյուսի հաստատությունները, կրթական աստիճանները կամ ծրագրերը, կամ երկու կամ ավելի որակի ապահովման կամ հավատարմագրման գործակալությունների միջև, համաձայն որի նրանց մեթոդաբանությունն արդյունավետ է և ընթացակարգերը համապատասխանաբար են գործում:

Որակավորումների ազգային շրջանակ
Ընդհանրապես, Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) մշակված է ազգային մակարդակում ճանաչվող և համատարր չափորոշիչներ և որակավորումներ ապահովելու համար, ինչպես նաև ուսումնառության արդյունքների և կարողությունների ճանաչումը երաշխավորելու համար և ապահովում է հիմք արդեն իսկ գոյություն ունեցող և նոր մշակվող որակավորումների հետագա վերանայման, հստակեցման և մշակման համար: Ի լրումն մնացած նպատակների, այն պետք է հեշտացնի ուսումնական ծրագրերի փոփոխությունները, և թույլ տա մատչելիության բարելավումը, և ավելացնի հասարակական ներգրավվածությունը, ինչպես նաև հաշվի առնի փոփոխվող սոցիալական կարիքները: Որակավորումների ազգային շրջանակը հիմնականում մշակվում է քաղաքականության մշակման և հասարակական խորհրդատվության արդյունքում միջնաժամկետ գործընթացով: Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում առկա ՈԱՇ-երը պետք է լինեն համանման, քանի որ հիմնված են Որակավորումների եվրոպական շրջանակի վրա:

Office Hours Specific periods of time, excluding lectures, personally indicated by academic staff for consultation and answering students' queries (e.g. Tuesdays from 15:00 to 17:00).
Open Class Lectures and seminars without the awarding of credits held by academic institutions outside regular courses. These are held at an appropriate level in response to the specific needs of the community and industry, without interrupting the conduct of full-time study programs.
Outcomes Anticipated or achieved results of programmes or the accomplishment of institutional objectives, as demonstrated by a wide range of indicators (such as student knowledge, cognitive skills, and attitudes). Outcomes are direct results of the instructional programme, planned in terms of learner growth in all areas. An outcome must be distinguished from an objective, which is a desired result. Generally, each outcome statement should describe one effect of the instructional programme, and not accumulate several into one statement. Also, the statements should be clearly detailed and easily understandable by all teaching staff and students in the given area or department.
Outcomes Assessment The process of evaluation and improvement of specific results of a higher education institution in order to demonstrate its institutional effectiveness. Assessment may concern the performance of teaching staff, the effectiveness of institutional practices, and the functioning of departments or programmes (e.g. programme reviews, budget reviews, etc.). It is a formative procedure used for

Աշխատանքային/ արտալսարանական ժամեր Դասախոսություններից դուրս առանձնահատուկ ժամեր, որը պրոֆեսորադասախոսական կազմը տրամադրում է խորհրդատվության և ուսանողների հարցերին պատասխանելու համար (օրինակ՝ 15:00-17:00-ը):
Բաց դաս Ուսումնական հաստատության կողմից պարբերական դասընթացներից դուրս իրականացվող դասախոսություններ և սեմինարներ, որոնց արդյունքում չեն շնորհվում կրեդիտներ: Այս դասերն իրականացվում են համապատասխան մակարդակում՝ բավարարելով հասարակության և արդյունաբերության որոշակի կարիքները, և չեն խոչընդոտում հիմնական կրթական ծրագրերի իրականացմանը:
Ուսումնառության արդյունքներ Կրթական ծրագրի կամ ինստիտուցիոնալ որևէ նպատակի իրագործման արդյունք, որն արտահայտվում է բազմաթիվ ցուցիչներով (ինչպիսիք են ուսանողների գիտելիքները, ճանաչողական կարողությունները): Ուսումնառության արդյունքներն ուսումնական ծրագրերի անմիջական արգասիքն են. ուսումնական ծրագրերն այնպես են պլանավորվում, որպեսզի ապահովեն ուսանողի աճը բոլոր ուղղություններով: Ուսումնառության արդյունքը պետք է տարբերել նպատակից. վերջինս ցանկալի արդյունքն է: Ընդհանրապես, յուրաքանչյուր ուսումնառության արդյունք պետք է նկարագրի կրթական ծրագրի որևէ կոնրետ արգասիք, այլ ոչ խմբավորի մի քանիսը մեկի տակ: Նաև ուսումնառության արդյունքները պետք է հստակ սահմանվեն, մանրակրկիտ և դյուրըմբռնելի լինեն տվյալ բնագավառի կամ բաժնի պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր անդամների և ուսանողների համար:
Արդյունքների գնահատում Բարձրագույն ուսումնական հաստատության որոշակի արդյունքներ գնահատելու և բարելավելու գործընթաց՝ վերջինիս ինստիտուցիոնալ արդյունավետությունը ցուցադրելու նպատակով: Գնահատումը կարող է վերաբերել դասախոսական կազմի կատարողականությանը, ինստիտուցիոնալ գործընթացների արդյունավետությանը և բաժինների ու կրթական ծրագրերի գործառույթներին:

institutional self-study, financial retrenchment, programme evaluation, and improved understanding of the current needs of students.
Peer Review/ External Review Assessment procedure regarding the quality and effectiveness of the academic programmes of an institution, its staffing, and/or its structure, carried out by external experts (peers). (Strictly speaking, peers are academics of the same discipline, but in practice, different types of external evaluators exist, even though all are meant to be specialists in the field reviewed and knowledgeable about higher education in general.) For a review, the source of authority of peers, types of peers, their selection and training, their site visits, and the standards to be met may vary. A review is usually based on a self-evaluation report provided by the institution and can be used as a basis for indicators or as a method of judgment for (external) evaluation in higher education.
Performance Criteria Checkpoints or benchmarks that are used to judge the attainment of performance standards. They indicate how well students meet expectations of what they should know and be able to do, as expressed by varying gradients of success by (scoring) rubrics or by grades.
Performance Standards Levels of achievement that are deemed exemplary or appropriate, i.e. specifications of the required level of quality of a student's work to meet the content standards. Performance standards shape expectations for educational outcomes.

իրականացմանը (օրինակ՝ կրթական ծրագրերի վերանայում, բյուջեի վերանայում և այլն): Սա զարգացման հնարավորություն ունեցող ընթացակարգ է, որն օգտագործվում է ինստիտուցիոնալ ինքնավերլուծության, ֆինանսական կրճատման, կրթական ծրագրերի գնահատման և ուսանողների ներկայիս պահանջներն առավել լավ հասկանալու համար:
Փոխգնահատում/ արտաքին ուսումնասիրություն Արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց, որը վերաբերում է ուսումնական հաստատության կրթական ծրագրերի որակին և արդյունավետությանը, աշխատակիցների համալրմանը և հաստատության կառուցվածքին: (Ընդհանուր առմամբ, փորձագետները միևնույն առարկայական ոլորտի մասնագետներ են, բայց գործնականում առանձնացնում են արտաքին փորձագետների տարբեր խմբեր՝ չնայած այն բանին, որ նրանք բոլորն էլ պետք է լինեն ուսումնասիրվող ոլորտի մասնագետներ և տեղեկացված լինեն բարձրագույն կրթության մասին առհասարակ): Փոխգնահատման համար կարող են փոփոխվել փոխգնահատողների իրավասությունների աղբյուրը, նրանց տեսակը, նրանց ընտրության ու վերապատրաստման եղանակը, նրանց ստուգայցերը ուսումնական հաստատություն և սահմանված չափորոշիչները: Փոխգնահատումը սովորաբար հիմնվում է հաստատության կողմից պատրաստված ինքնավերլուծության զեկույցի վրա և կարող է կիրառվել որպես հիմք ցուցիչների համար կամ որպես դատողություններ կատարելու մեթոդ բարձրագույն կրթության (արտաքին) գնահատման մասին:
Կատարողականի չափանիշներ Ստուգման կետեր կամ բենչմարքեր, որոնք օգտագործվում են՝ որոշելու կատարողականի չափանիշների պահպանումը: Կատարողականի չափանիշները ցուցադրում են, թե ուսանողները որքանով են արդարացնում սպասելիքներն այն մասին, թե իրենք ինչ պետք է իմանան և կարողանան անել, ինչը արտահայտվում է հաջողության փոփոխական գրադիենտներով (միավորներ ձևավորող), թեմաների միջոցով կամ գնահատականներով:
Կատարողականի չափորոշիչներ Նվաճումների մակարդակ, որը համարվում է օրինակելի կամ պատշաճ, այսինքն ուսանողի աշխատանքի որակի պահանջվող մակարդակի մանրամասնում՝ բովանդակության չափորոշիչները բավարարելու նպատակով: Կատարողականի չափորոշիչները ձևավորում են ակնակիքները կապված ուսուցման արդյունքների հետ :

Performance Indicators A range of statistical parameters representing a measure of the extent to which a higher education institution or a programme is performing in a certain quality dimension. They are shortterm or long-term qualitative and quantitative measures of the output of a system or programme. They allow institutions to benchmark their own performances or allow comparison among higher education institutions. Performance indicators work efficiently only when used as part of a coherent set of input, process, and output indicators. As higher education institutions are engaged in a variety of activities and target a number of different objectives, it is essential to be able to identify and to implement a large range of performance indicators in order to cover the entire field of activity. Examples of frequently used performance indicators, covering various institutional activities, include the number of applications per place, the entry scores of candidates, the staff workload, the employability of graduates, research grants and contracts, the number of articles or studies published, the staff/student ratio, institutional income and expenditure, and institutional and departmental equipment and furniture. Performance indicators are related to benchmarking exercises and are identified through a specific piloting exercise in order to best serve their use in a comparative or profiling analysis.	Կատարողականի ցուցիչներ Վիճակագրական պարամետրեր, որոնք ցույց են տալիս, թե բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրը որքանով է ապահովում որակը իր գործունեության ընթացքում: Կատարողականի ցուցիչները իրենցից ներկայացնում են որոշակի համակարգի կամ ծրագրի արդյունքի որակական կամ քանակական կարճաժամկետ կամ երկարաժամկետ չափում: Նրանք հնարավորություն են ընձեռում ուսումնական հաստատություններին կատարել իրենց իսկ գործունեության բենչմարքինգ կամ հնարավոր են դարձնում համեմատությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև: Կատարողականի ցուցիչներն արդյունավետ են գործում միայն այն դեպքում, երբ կիրառվում են ներդրման, գրծընթացի և արդյունքի ցուցիչների հետ զուգահեռ: Քանի որ մասնագիտական ուսումնական հաստատությունները ներգրավված են զանազան գործընթացներում և հետապնդում են զանազան նպատակներ, անհրաժեշտ է սահմանել և կիրառել կատարողականի ցուցիչների ստվար բազմություն՝ գործունեության ամբողջ դաշտը ծածկելու նպատակով: Հաճախ կիրառվող կատարողականի ցուցիչների օրինակներ են՝ որոշակի տեղի համար դիմումների քանակը, դիմողների ընդունելության քանակական տվյալները, աշխատակազմի ծանրաբեռվածությունը, շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը, հետազոտական դրամաշնորհային ծրագրերը և պայմանագրերը, հրատարակված հոդվածների կամ հետազոտական աշխատանքների քանակը, աշխատակազմ- ուսանողներ հարաբերակցությունը, հաստատության եկամուտն ու ծախսերը, և հաստատության և բաժինների սարքավորումներն ու կահավորումը: Կատարողականի ցուցիչներն առնչվում են բենչմարքինգի հետ և սահմանվում են որոշակի պիլոտային գործընթացի արդյունքում՝ համեմատական կամ բնութագրիչ վերլուծությունում իրենց նպատակին լավագույնս ծառայելու համար:
Portfolio for Accreditation An accumulation of evidence (record of achievement) about specific proficiencies and the characteristics of an institution in relation to a specific type of activity, especially to learning standards. This operation can be performed either by the concerned institution or by an external assessor.	Հավատարմագրման պորտֆոլիո Ապացույցների կուտակում (նվաճումների գրանցում) ուսումնական հաստատության՝ գործունեության առանձնահատուկ տեսակի, մասնավորապես, ուսումնական չափորոշիչների հետ առնչվող որոշակի փորձառության կամ առանձնահատկությունների վերաբերյալ: Այս գործընթացը կարող է իրականացվել կա՛մ ուսումնասիրվող հաստատության, կա՛մ արտաքին գնահատողի կողմից:
Postdoctoral Researcher A researcher who engages in research activity after finishing a doctoral program for enhancing his/her research capacity.	Հետդոկտորական հետազոտող Հետազոտող, որը ներգրավվում է հետազոտական աշխատանքների մեջ դոկտորական ծրագիրն ավարտելուց հետո՝ իր հետազոտական կարողությունները զարգացնելու նպատակով:

Private Institution A college, university or other entity which provides courses and is controlled and operated by a private individual, non-governmental non-profit agency, or for-profit organization. It is funded primarily through tuition, donations, and sources other than public funds.
Process–Based Benchmarking Goes beyond the comparison of data-based scores and conventional performance indicators (statistical benchmarking) and looks at the processes by which results are achieved. It examines activities made up of tasks, steps which cross the boundaries between the conventional functions found in all institutions. It goes beyond the comparison of data and looks at the processes by which the results are achieved.
Professional competencies An individual's specialized knowledge of information sources, access, technology, services, and management, and the ability to critically and effectively evaluate, filter and use this knowledge in order to successfully accomplish specific assignments and obtain results.
Professional Degree Program A program offered by professional graduate schools.
Professional Faculty Academic staff of a professional graduate school who have advanced practical skills with more than five years of career in the field they teach in.
Professional Graduate School A graduate school which offers one or two years of education (three years for law schools) to foster experts with advanced skills. Students who complete are awarded a Professional Degree (Juris Doctor for law schools, Master's Degree (Professional) for others).

Մասնավոր ուսումնական հաստատություն Քոլեջ, համալսարան կամ այլ ուսումնական հաստատություն, որը տրամադրում է դասընթացներ և վերահսկվում է և ղեկավարվում անհատի, ոչ պետական և ոչ կոմերցիոն գործակալության կամ կազմակերպության կողմից: Այն հիմնականում ֆինանսավորվում է ուսման վարձի, նվիրատվությունների միջոցով կամ հասարակական ֆոնդերից տարբերվող այլ աղբյուրների կողմից:
Գործընթացի վրա հիմնված բենչմարքինգ Բենաչմարքինգի այս տեսակը ոչ միայն համեմատում է տվյալների վրա հիմնված արդյունքները սովորական կատարողականի ցուցիչների հետ (վիճակագրական տվյալների վրա հիմնված բենչմարքինգ), այլ կենտրոնանում է այն գործընթացի վրա, որը տալիս է արդյունքներ: Այն ուսումնասիրում է այն գործընթացները, որոնք բաղկացած են առաջադրանքներից, քայլերից, որոնք կտրում են սահմանագիծը բոլոր ուսումնական հաստատություններում առկա սովորական գործառույթների միջև: Այն դուրս է գալիս տվյալների համեմատության շրջանակներից և դիտարկում է այն գործընթացները, որոնց միջոցով արդյունքներ են ստացվում:
Մասնագիտական կարողություններ/ կոմպետենցիաներ Տեղեկատվական աղբյուրների, մուտքի իրավունքի, տեխնոլոգիայի, ծառայությունների և ղեկավարման վերաբերյալ անհատի մասնագիտացված գիտելիքներ և քննադատաբար և արդյունավետ գնահատելու, այս գիտելիքները զտելու կարողություն՝ որոշակի առաջադրանքներ հաջողությամբ ավարտելու և արդյունք ստանալու նպատակով:
Որակավորում շնորհող ծրագիր Աստիճանաշնորհող ուսումնական հաստատության կողմից առաջարկվող կրթական ծրագիր:
Պրոֆեսորադասախոսական կազմ Աստիճանաշնորհում իրականացնող ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմ, ովքեր ունեն զարգացած գործնական կարողություններ և ավելի քան հինգ տարվա աշխատանքային փորձ իրենց դասավանդած ոլորտում:
Որակավորում շնորհող ուսումնական հաստատություն Աստիճանաշնորհող ուսումնական հաստատություն, որն առաջարկում է մեկ կամ երկու տարի տևողությամբ կրթություն՝զարգացած կարողություններով մասնագետներ տալու նպատակով: Շրջանավարտներին շնորհվում է որակավորում (Իրավունքի Դոկտոր իրավաբանական ֆակուլտետներում կամ Մագիստրոսի աստիճան (Մասնագիտական) այլ ֆակուլտետներում):

Professional Recognition Refers to the right to practice and the professional status accorded to a holder of a qualification. Owing to different regulations for the recognition of degrees or titles, a differentiation of two groups should be made: 'de Jure Professional Recognition' applies to the right to work in a specific country in a legally regulated profession (e.g. as a medical doctor). 'De Facto Professional Recognition' refers to situations of unregulated professional recognition, such as situations in which no national legal exists or is required.
Professional Training College A specialized training college offering practical/vocational higher education, which requires graduation from upper secondary schools for admission.
Program A set of subjects arranged for the achievement of education and research objectives (e.g. bachelor's, master's and doctoral programs), or an academic structure that may replace a department set up in a faculty, comprising an aim, a term of study, academic programs and the awarding of a degree.

Q
Qualification Any higher education award (degree, diploma, or other type of formal certification) issued by a competent, registered authority attesting to the successful completion of a course programme. It covers a wide variety of higher education awards at different levels and across different countries (e.g. the Bachelor's and Master's Degree, the Doctorate, etc.). A qualification is important in terms of what it signifies: competencies and range of knowledge and skills. Sometimes it is equivalent to a license to practice. It is often synonymous with credential.
Qualification Descriptors Qualification descriptors are statements that set out the outcomes of principal higher education qualifications at given levels (usually of an awarded degree) and demonstrate the nature of change between levels. At some levels, there may be more than one type of

Մասնագիտական ճանաչում Որակավորման կրողին գործունեության իրավունքի կամ մասնագիտական կոչման շնորհում: Հիմնվելով աստիճանների կամ կոչումների ճանաչման կանոնակարգերի վրա՝ պետք է զանազանել մասնագիտական ճանաչման երկու տեսակ՝ ա) «Դե յուրե մասնագիտական ճանաչում», որն իրավունք է տալիս աշխատելու որոշակի երկրում օրենքով վերահսկվող մասնագիտությամբ (բժիշկ): բ) «Դե ֆակտո մասնագիտական ճանաչում», որը վերաբերում է չվերահսկվող, չկարգավորվող մասնագիտական ճանաչմանը, ինչպիսին են այն դեպքերը, որտեղ չի գործում կամ պահանջվում որևէ ազգային իրավական օրինական իրավազորում:
Մասնագիտական վերապատրաստման քոլեջ Մասնագիտացված վերապատրաստման քոլեջ, որն առաջարկում է գործնական/մասնագիտական կրթություն, որն ընդունելության համար պահանջում է ավագ միջնակարգ դպրոցի կրթություն:
Կրթական ծրագիր Առարկաների շարք, որոնք ուղղված են կրթական և հետազոտական նպատակների իրագործմանը (բակալավրական, մագիստրոսական և դոկտորական կրթական ծրագրեր), կամ ֆակուլտետում որևէ բաժնին փոխարինող կրթական կառույց, որն ունի նպատակ, ուսուցման եղանակ, ակադեմիական ծրագրեր և արդյունքում շնորհում է դիպլոմ:

Որակավորում Իրավասու գրանցված մարմնի կողմից շնորհված աստիճան, դիպլոմ կամ այլ վկայական, որը վկայում է բարձրագույն կրթական ծրագրի հաջող ավարտը: Այն ծածկում է բարձրագույն կրթության զանազան աստիճաններ տարբեր երկրներում (Բակալավրի և Մագիստրոսի աստիճան, Դոկտորի աստիճան և այլն): Որակավորումը կարևոր է այն առումով, թե ինչ է այն արտահայտում՝ կարողություններ և գիտելիքներ ու հմտություններ: Որոշ դեպքերում այն համարժեք է գործունեության արտոնագրին: Այն հաճախ նույնիմաստ է մանդատին:
Որակավորման բնութագրիչներ Որակավորման բնութագրիչները սահմանում են բարձրագույն կրթության հիմնական որակավորումների արդյունքները համապատասխան մակարդակներում (սովորաբար կապված շնորհված աստիճանի հետ) և

qualification. The first part of a qualification descriptor is a statement regarding outcomes, i.e. the achievement of a student that he or she should be able to demonstrate for the award of the qualification. The second part is a statement of the wider abilities that the typical student could be expected to have developed. Upon periodical review of the existing qualification descriptors and in light of the development of other points of reference, such as benchmark statements, additional qualification descriptors at each level are elaborated. In view of the creation of the European Higher Education Area, a set of descriptors known as the 'Dublin Descriptors' was developed by an international group of higher education experts (Joint Quality Initiative) and serves as reference for a number of national quality assurance agencies, policy makers and specialists throughout Europe. The Dublin Descriptors seek to identify the nature of a qualification as a whole, without imposing a specific threshold.

Qualifications Framework

A comprehensive policy framework, defining all nationally recognized qualifications in higher education in terms of workload, level, quality, learning outcomes, and profiles. It should be designed to be comprehensible through the use of specific descriptors for each qualification covering both its breadth (competencies associated with learning outcomes) and its depth (level). It is structured horizontally in order to cover all qualifications awarded in a system, and vertically, by level. Its purpose is to facilitate: (i) curriculum development and design of study programmes; (ii) student and graduate mobility; and (iii) recognition of periods of study and credentials. While certain higher education systems have their own qualification frameworks, others allow for the development of a wide variety of qualifications without providing an explicit framework. The emerging European Higher Education Area, envisaged by the Bologna Declaration, is regarded by many as needing a pan-European Qualification Framework.

Among recent output-focused systems approaches and techniques used to classify and explain qualifications and qualification frameworks are: the Bachelor's/Master's Degree generic descriptors (e.g. The Joint Quality Initiative (or Dublin Descriptors); the Bachelor's/Master's Degree subject-specific benchmarks (e.g. The Tuning Project); the International Credit Framework (e.g. ECTS for transfer and accumulation); The I

ցուցադրում են մակարդակների միջև տարբերությունների բնույթը: Որոշ մակարդակներում կարող է լինել որակավորումների ավելի քան մեկ տեսակ: Որակավորման բնութագրիչների առաջին մասը արդյունքների վերաբերյալ սահմանումն է՝ ուսանողի ձեռքբերումները, որոնք վերջինս պետք է կարողանա ցուցադրել որակավորումը ստանալու նպատակով: Երկրորդ մասը վերաբերում է ավելի ընդարձակ կարողություններին, որոնք սովորական ուսանողը պետք է որ ձեռք բերած լիներ: Գոյություն ունեցող որակավորման բնութագրիչների պարբերական վերանայմանը և հղման այլ կետերի՝ բենչմարքի կողմնորոշիչների մշակմանը զուգահեռ յուրաքանչյուր մակարդակում մշակվում են լրացուցիչ որակավորման բնութագրիչներ: Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի առաջացման արդյունքում մասնագիտական կրթության միջազգային փորձագետների մի խմբի կողմից մշակվեցին մի շարք բնութագրիչներ, որոնք հայտնի են որպես «Դուբլինյան բնութագրիչներ» և օգտագործվում են որպես հիմք մի շարք ազգային որակի ապահովման գործակալությունների, քաղաքականություն մշակողների և մասնագետների կողմից Եվրոպայով մեկ: Դուբլինյան բնութագրիչները ձգտում են սահմանել ամբողջական որակավորման բնույթը՝ առանց որոշակի շեմ սահմանելու:

Որակավորումների շրջանակ

Քաղաքականության համապարփակ շրջանակ, որը սահմանում է ազգային մակարդակում ճանաչված բարձրագույն կրթության բոլոր որակավորումները, որոնք ներառում են աշխատանքային ծանրաբեռնվածությունը, որոշակի մակարդակներ, կրթական ուսումնառության արդյունքները և այլ բաղադրիչներ: Որակավորումների շրջանակը պետք է այնպես մշակվի, որպեսզի լինի հասկանալի. պետք է կիրառվի առանձնահատուկ բնութագրիչ յուրաքանչյուր որակավորման համար՝ ծածկելով և՛ նրա լայնությունը/ծավալը (կոմպետենցիաներ, որոնք առնչվում են ուսումնառության արդունքների հետ) և՛ խորությունը (մակարդակը): Այն ունի հորիզոնական (որպեսզի ծածկի համակարգում շնորհվող բոլոր որակավորումները) և ուղղահայաց (ըստ մակարդակների) կառուցվածք: Որակավորումների շրջանակի նպատակն է հեշտացնել՝ ա) ուսումնական պլանների և կրթական ծրագրերի մշակումը; բ)ուսանողների և շրջանավարտների շարժունությունը; գ)ուսումնառության ժամանակահատվածների և կրեդիտների ճանաչումը: Այն ժամանակ, երբ որոշակի մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեն իրենց սեփական որակավորումների շրջանակը, ուրիշները մշակում են զանազան որակավորումներ՝ առանց ապահովելու հստակ շրջանակ: Բոլոնիայի գործընթացի կողմից նախատեսված զարգացող Բարձրագույն կրթության եվրոպական տարածքը, շատերի կարծիքով, պետք է ունենա Որակավորումների

ntegrated National Credit Framework (e.g. Ireland, Denmark); or, Learning Outcomes and Competencies – General and Specific (e.g. United Kingdom, Denmark).
Quality (Academic) Quality in higher education is a multi-dimensional, multilevel, and dynamic concept that relates to the contextual settings of an educational model, to the institutional mission and objectives, as well as to specific standards within a given system, institution, programme, or discipline. Quality may thus take different, sometimes conflicting, meanings depending on (i) the understanding of various interests of different constituencies or stakeholders in higher education (e.g. students; universities; disciplines; the labour market; society; a government); (ii) its references: inputs, processes, outputs, missions, objectives, etc.; (iii) the attributes or characteristics of the academic world worth evaluating; and (iv) the historical period in the development of higher education.
Quality as enhancement or improvement Focusing on the continuous search for permanent improvement, stressing the responsibility of the higher education institution to make the best use of its institutional autonomy and freedom. Achieving quality is central to the academic ethos and to the idea that academics themselves know best what quality is.
Quality as Excellence A traditional, elitist academic view, according to which only the best standards of excellence (usually meaning a high level of difficulty and of complexity of a programme, the seriousness of the student testing procedures, etc.) are understood as revealing true academic quality.

համաեվրոպական շրջանակ: Որակավորումները և որակավորման շրջանակները դասակարգելու և բացատրելու համար առկա են մի շարք համակարգային մոտեցումներ և հնարքներ, որոնցից են՝ Բակալավրի/ Մագիստրոսի աստիճանի ընդհանուր բնութագրիչները (օրինակ՝ Դուբլինյան բնութագրիչները), Բակալավրի/ Մագիստրոսի աստիճանի առարկայական բենչմարքերը (օրինակ՝ Tuning նախագիծը), Կրեդիտների միջազգային շրջանակը (օրինակ՝ Կրեդիտների փոխանցման և կուտակաման եվրոպական համակարգը), Կրեդիտների ինտեգրված ազգային համակարգը (օրինակ՝ Իռլանդիա, Դանիա), կամ ընդհանուր և կոնկրետ ուսումնառության արդյունքներն ու կոմպետենցիաները (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Դանիա):
Որակ (ակադեմիական) Բարձրագույն կրթության մեջ որակը բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է, որը վերաբերում է կրթական մոդելի համատեքստին, ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, ինչպես նաև որոշակի համակարգի, ուսումնական հաստատության, կրթական ծրագրի, կամ առարկայի առանձնահատուկ չափորոշիչներին: Հետևաբար որակը կարող է ստանալ տարբեր, երբեմն հակասող նշանակություն՝ կախված՝ ա)բարձրագույն կրթության տարբեր «սպառողների» և շահակիցների հետաքրքրություններից (օրինակ՝ ուսանողներ, համալսարաններ, առարկաներ, աշխատաշուկա, հասարակություն, կառավարություն և այլն); բ)հղման կետերից՝ ներդրում, գործընթաց, արդյունք, առաքելություն, նպատակներ և այլն; գ)կրթական աշխարհի բնութագրիչներից և առանձնահատկություններից, որոնք արժանի են գնահատման; և դ)մասնագիտական կրթության զարգացման պատմական ժամանակահատվածից:
Որակը որպես զարգացում կամ բարելավում Այս պարագայում շեշտը դրվում է մշտական զարգացմանը ուղղված շարունակական ջանքերի և բարձրագույն ուսումնական հաստատության՝ իր ինստիտուցիոնալ ինքնավարությունն ու ազատությունը ճիշտ օգտագործելու պատասխանատվության վրա: Որակի ապահովումը կրթության կարևորագույն բաղադրիչներից է և վկայում է, որ մանկավարժներն իրենք լավագույնը գիտեն, թե ինչ է որակը:
Որակը՝ որպես գերազանցություն Որակի մասին ավանդական, էլիտար պատկերացում, համաձայն որի գերազանցության միայն լավագույն չափորոշիչներն (սովորաբար այն չափորոշիչները, որոնք արտահայտում են կրթական ծրագրի բարդությունը, ուսանողների գիտելիքների ստուգման ընթացակարգերի լրջությունը և այլն) են ընկալվում որպես իրական կրթական որակը բացահայտողներ:

Quality as Fitness for Purpose A concept that stresses the need to meet generally accepted standards such as those defined by an accreditation or quality assurance body, the focus being on the effectiveness of the processes at work in the institution or programme in fulfilling its objectives and mission. Sometimes quality in this sense is also labeled as: (i) a value for money approach owing to the (implicit) focus on how the inputs are effectively and efficiently used by the processes and mechanisms involved or (ii) the value-added approach when results are evaluated in terms of changes obtained through various educational processes (e.g. teaching and learning processes). A variation of the latter is the quality as transformation approach, which is strongly student-centered. It considers quality as a process of change, adding value to students through their learning experience.
Quality as Fitness of Purpose A concept that focuses on the defined objectives and mission of the institution or programme with no check of the fitness of the processes themselves in regard to any external objectives or expectations. Fitness of purpose evaluates whether the quality-related intention of an organization are adequate. Within this approach, one may distinguish alternative approaches developed in the 1990s: (i) quality as threshold whereby certain norms and criteria are set, which any programme or institution has to reach to be considered to be of quality. In many European higher education systems, a variant defining quality as a basic standard, closely linked to accreditation, is used. In this case, the starting point is the specification of a set of minimum standards to be met by an institution or programme and to generate the basis for the development of quality improvement mechanisms; (ii) quality as consumer satisfaction: quality perceived as closely linked to the growing importance of market forces in higher education, that focuses on the importance of the external expectations of consumers (students, families, society at large) and other stakeholders.

Որակը՝ որպես համապատասխանություն նպատակին Մոտեցում, որը շեշտում է ընդհանուր ընդունված չափորոշիչները բավարարելու անհրաժեշտությունը. այդպիսի չափորոշիչներ են հավատարմագրման կամ որակի ապահովման գործակալության կողմից ընդունված չափորոշիչները, որոնք կենտրոնանում են ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի նպատակների և առաքելության իրականացման գործընթացների արդյունավետության վրա: Երբեմն որակը այս իմաստով դիտարկվում է որպես՝ ա) «արժեք փողի դիմաց» մոտեցում, որն արտահայտում է, թե ինչպես են ներդրումները արդյունավետորեն կիրառվում առկա գործընթացներում և մեխանիզմներում; բ) «ավելացված արժեք» մոտեցում, երբ արդյունքները գնահատում են՝ կախված զանազան կրթական գործընթացներում կատարված փոփոխությունների (ուսուցման և ուսումնառության գործընթացներ): Երկրորդ մոտեցման տարբերակը բերում է որակի՝ որպես «փոխակերպման գործընթաց» մոտեցմանը, որը ծայրահեղ ուսանողակենտրոն է: Այն որակը դիտում է որպես փոփոխության գործընթաց՝ արժևորելով ուսանողներին իրենց ուսումնառության փորձի միջոցով:
Որակը՝ որպես նպատակի համապատասխանություն Մոտեցում, որը կենտրոնանում է ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի սահմանված նպատակների և առաքելության վրա՝ առանց ստուգելու նպատակների համապատասխանությունը որևէ արտաքին նպատակների կամ ակնկալիքների: Այս մոտեցումը գնահատում է, թե արդյոք ընդունելի են ուսումնական հաստատության՝ որակի հետ առնչվող նպատակները: Այս մոտեցման մեջ կարելի է զանազանել այլընտրանքային մոտեցումներ՝ մշակված 1990-ականներին. ա) որակը՝ որպես շեմ, համաձայն որի սահմանվում են որոշակի նորմեր և չափանիշներ, որոնք պետք է բավարարվեն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի կողմից՝ որակյալ համարվելու նպատակով: Բազմաթիվ եվրոպական բարձրագույն կրթության համակարգերում որակը դիտում են՝ որպես հավատարմագրմանը սերտորեն կապված հիմնական չափորոշիչ: Այս դեպքում սկզբնակետը նվազագույն չափորոշիչների սահմանումն է, որոնք ուսումնական հաստատությունը կամ ծրագիրը պետք է բավարարեն, և որակի բարելավման մեխանիզմների ստեղծումն է: բ)Որակը՝ որպես սպառողների ներկայացրած կամ ենթադրվող կարիքների բավարարում. այս պարագայում որակը սերտորեն կապում են մասնագիտական կրթության մեջ աշխատաշուկայի աճող ազդեցության հետ, որը կարևորում է կրթության սպառողների (ուսանողներ, ընտանիքներ, հասարակություն) և այլ շահակիցների արտաքին ակնկալիքները:

Quality Assessment/Quality Review

The actual process of external evaluation (reviewing, measuring, judging) of the quality of higher education institutions and programmes. It consists of those techniques, mechanisms, and activities that are carried out by an external body in order to evaluate the quality of the higher education processes, practices, programmes, and services. Some aspects are important when defining and working with the concept of quality assessment: (i) the context (national, institutional); (ii) the methodology (self-assessment, assessment by peer review, site visits); (iii) the levels (system, institution, department, individual); (iv) the mechanisms (rewards, policies, structures, cultures); (v) certain quality values attached to quality assessment such as academic values, traditional values (focusing upon the subject field), managerial values (focusing on procedures and practices); pedagogical values (focusing on staff and their teaching skills and classroom practice); employment values (emphasizing graduate output characteristics and learning outcomes).

Quality Assurance

An all-embracing term referring to an ongoing, continuous process of evaluating (assessing, monitoring, guaranteeing, maintaining, and improving) the quality of a higher education system, institutions, or programmes. As a regulatory mechanism, quality assurance focuses on both accountability and improvement, providing information and judgments (not ranking) through an agreed upon and consistent process and well-established criteria. Many systems make a distinction between internal quality assurance (i.e. intrainstitutional practices in view of monitoring and improving the quality of higher education) and external quality assurance (i.e. inter- or supra-institutional schemes assuring the quality of higher education institutions and programmes). Quality assurance activities depend on the existence of the necessary institutional mechanisms preferably sustained by a solid quality culture. Quality management, quality enhancement, quality control, and quality assessment are means through which quality assurance is ensured. The scope of quality assurance is determined by the shape and size of the higher education system. Quality assurance varies from accreditation, in the sense that the former is only a prerequisite for the latter. In practice, the relationship between the two varies a great deal from one country to another. Both imply various consequences such as the capacity to operate and to provide

Որակի գնահատում/ որակի վերանայում

Որակի գնահատումը արտացոլում է բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին գնահատման (վերանայում, չափում, համեմատում) գործընթացը: Այն կազմված է արտաքին մարմնի՝ մասնագիտական կրթության գործընթացների, գործունեության, ծրագրերի և ծառայությունների որակը գնահատելու համար օգտագործվող հնարքներից, մեխանիզմներից և գործողություններից: Որոշ ասպեկտներ շատ կարևոր են, երբ սահմանում և կիրառում ենք որակի գնահատման գաղափարը՝ ա) համատեքստը (ազգային, ինստիտուցիոնալ); բ) մեթոդները (ինքնագնահատում, արտաքին փոխգնահատում, ստուգայց ուսումնական հաստատություն); գ) մակարդակները (համակարգ, ուսումնական հաստատություն, բաժանմունք, անհատներ); դ) մեխանիզմները (խրախուսում, քաղաքականություն, կառուցվածք, մշակույթ), ե) որակի գնահատմանը առնչվող որակի արժեհամակարգը, ինչպես օրինակ ակադեմիական արժեքները (որոնք կենտրոնացած են մասնագիտական դաշտի վրա), կառավարման արժեքները (որոնք կենտրոնացած են դասավանդողների և նրանց դասավանդման ունակությունների ու լսարանային փորձառության վրա), աշխատանք գտնելու արժեքները (որոնք ընդգծում են շրջանավարտների ուսումնառության արդյունքների բնութագրիչները և ուսումնառության վերջնական արդյունքները):

Որակի ապահովում

Ընդգրկուն տերմին, որը վերաբերում է բարձրագույն կրթության համակարգի, հաստատությունների կամ ծրագրերի որակի գնահատման (ստուգում, մշտադիտարկում, երաշխավորում, պահպանում և բարելավում) շարունակական գործընթացին: Որպես կանոնակարգման մեխանիզմ, որակի ապահովումը միաժամանակ կենտրոնանում է հաշվետվողականության և բարելավման վրա՝ համաձայնեցված և հետևողական գործընթացի ու հստակ սահմանված չափանիշների միջոցով տրամադրելով տեղեկատվություն և կարծիք (առանց դասակարգման): Շատ համակարգեր տարբերություն են դնում որակի ներքին ապահովման (այսինքն՝ ուսումնական հաստատությունների գործնական մշտադիտարկման և մասնագիտական կրթության որակի բարելավման առումով) և որակի արտաքին ապահովման (այսինքն՝ բուհերի և ծրագրերի որակի ապահովման միջբուհական կամ արտաբուհական մեխանիզմներ) միջև: Որակի ապահովման միջոցառումները կախված են անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունից, որոնք, ցանկալի է, որ երաշխավորված լինեն որակի ապահովման հիմնավոր մշակույթով: Որակի ապահովման գործունեության շրջանակը որոշվում է մասնագիտական կրթության համակարգի կառուցվածքով և չափերով: Որակի կառավարումը, բարելավումը, վերահսկումը և

educational services, the capacity to award officially recognized degrees, and the right to be funded by the state. Quality assurance is often considered as a part of the quality management of higher education, while sometimes the two terms are used synonymously.

Quality Audit

The process of quality assessment by which an external body ensures that (i) the institution of programme quality assurance procedures or (ii) that the overall (internal and external) quality assurance procedures of the system are adequate and are actually being carried out. Quality audit looks to the system for achieving good quality and not at the quality itself. A quality audit can be performed only by persons (i.e. quality auditors) who are not directly involved in the areas being audited. Quality audits are undertaken to meet internal goals (internal audit) or external goals (external audit). The results of the audit must be documented (audit report).

Quality Control

The process of quality evaluation that focuses on the internal measurement of the quality of an institution or a programme. It refers to a set of operational activities and techniques (monitoring activities and a structured internally planned and implemented policy) elaborated and used to fulfill requirements of quality.

Often used interchangeably with quality management and quality assurance, it refers to an aggregate of actions and measures taken regularly to assure the quality of higher education products, services, or processes, with an emphasis on the assurance that a prescribed threshold of quality is met. It aims both at monitoring the process and at eliminating certain causes generating an unsatisfactory functioning. Sometimes a minimal quality control (mostly in the shape of some kind of certification) exists serving as a filtering mechanism in confirming that a higher education institution is fulfilling minimal agreed upon quality requirements and has appropriate quality monitoring

գնահատումը որակի ապահովման գործընթացի իրականացման երաշխիքներն են: Որակի ապահովումը տարբերվում է հավատարմագրումից այն իմաստով, որ առաջինը վերջինիս անհրաժեշտ նախապայմանն է միայն: Երկուսն էլ ներառում են զանազան հետևանքներ՝ ուսումնական հաստատությանը ընձեռում են գործունեություն ծավալելու և կրթական ծառայություններ մատուցելու, պաշտոնապես ճանաչված աստիճաններ շնորհելու և պետության կողմից ֆինանսավորվելու հնարավորություն: Որակի ապահովումը հաճախ համարվում է մասնագիտական կրթության որակի կառավարման մի մասը, մինչդեռ որակի ապահովումն ու հավատարմագրումը հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ:

Որակի փորձաքննություն

Որակի փորձաքննությունը որակի գնահատման գործընթաց է, որի միջոցով արտաքին մարմինը երաշխավորում է, որ ա)ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակի ապահովման ընթացակարգերը, կամ բ) համակարգի ողջ (ներքին և արտաքին) որակի ապահովման ընթացակարգերը համապատասխան/ ընդունելի են և իսկապես իրագործվում են: Որակի փորձաքննությունը հետևում է ոչ թե բուն որակին, այլ այն բանին, որ համակարգը որակով գործի: Որակի փորձաքննությունը կարող է իրականացվել միայն այն անձանց (այսինքն՝ որակի աուդիտորների) կողմից, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն փորձաքննության ենթարկվող ոլորտում: Որակի փորձաքննությունները կարող են իրականացվել ներքին նպատակներին (ներքին փորձաքննություն) կամ արտաքին նպատակներին (արտաքին փորձաքննություն) համապատասխանելու համար: Փորձաքննության արդյունքները պետք է արձանագրվեն փորձաքննության հաշվետվության միջոցով:

Որակի վերահսկում

Որակի վերահսկումը որակի գնահատման գործընթաց է, որը կենտրոնանում է ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակի ներքին չափման վրա: Այն վերաբերում է մի շարք կիրառելի/արդյունավետ գործընթացների և հնարքների (մշտադիտարկման գործընթացներ և ներքին մակարդակում պլանավորված և իրականացված կառուցվածքային քաղաքականություն), որոնք կոնկրետացվում/ հստակեցվում և կիրառվում են՝ որակի պահանջները բավարարելու համար: Որակի վերահսկումը, հաճախ որակի կառավարման և որակի ապահովման հետ փոխարինաբար կիրառվելով, վերաբերվում է գործողությունների և միջոցների համախմբին, որոնք պարբերաբար կիրառվում են՝ հավաստելու բարձրագույն կրթության «արտադրանքի», ծառայությունների կամ գործընթացների որակը՝ շեշտադրելով, որ ապահովված է որակի համար սահմանված շեմը: Այն նպատակաուղղված է և՛ գործընթացի մշտադիտարկմանը,

procedures in place.
Quality Culture It refers to a set of shared, accepted, and integrated patterns of quality (often called principles of quality) to be found in the organizational cultures and the management systems of institutions. Awareness of and commitment to the quality of higher education, in conjunction with a solid culture of evidence and with the efficient management of this quality (through quality assurance procedures) are the ingredients of a quality culture. As quality elements change and evolve over time, so must the integrated system of quality supportive attitudes and arrangements (quality culture) change to support new quality paradigms in higher education.
Quality Management An aggregate of measures taken regularly at system or institutional level in order to assure the quality of higher education with an emphasis on improving quality as a whole. As a generic term, it covers all activities that ensure fulfillment of the quality policy and the quality objectives and responsibilities and implements them through quality planning, quality control, quality assurance, and quality improvement mechanisms.
Quality Planning It consists of the set of actions that establishes the objectives and the conditions referring to the quality of higher education and to the application of the mechanism of the quality system. Quality planning includes product planning (identification, classification, and determination of the importance of the features referring to quality as well as to the establishment of the objectives, the conditions referring to quality, and its restraints), managerial and operational planning (including its organization and programming), an elaboration of quality plans, and the provision of quality improvement measures.

և՛ անբավարար գործառության հանգեցնող պատճառների վերացմանը: Երբեմն գործում է որակի նվազագույն վերահսկում, որը ծառայում է որպես ֆիլտրման մեխանիզմ՝ հաստատելու, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը բավարարում է որակի նվազագույն համաձայնեցված պահանջները և ունի որակի մշտադիտարկման համապատասխան մեխանիզմներ:
Որակի մշակույթ Որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ (հաճախ կոչվում է որակի սկզբունքներ), որն առկա է ուսումնական հաստատության կազմակերպչական մշակույթում կամ կառավարման համակարգերում: Բարձրագույն կրթության մեջ որակի իմացությունը և այն ապահովելու պարտավորվածությունը, «Փաստերի վրա հիմնված կայուն մշակույթի» և այդ որակի համապատասխան կառավարման (որակի ապահովման ընթացակարգերի միջոցով) հետ հանդերձ կազմում են որակի մշակույթը: Քանի որ որակի բաղադրիչները ժամանակի ընթացքում փոփոխվում և զարգանում են, պետք է փոփոխվի նաև որակի ինտեգրված համակարգը՝ իր մոտեցումներով և կարգավորումներով (որակի մշակույթ)՝ բարձրագույն կրթության մեջ որակի նոր նմուշներն/օրինակներն ապահովելու նպատակով:
Որակի կառավարում Որակի կառավարումը ենթադրում է միջոցների համախումբ, որոնք պարբերաբար կիրառվում են համակարգային կամ ինստիտուցիոնալ մակարդակում՝ բարձրագույն կրթության որակի ապահովելու համար՝ շեշտադրելով առհասարակ որակի բարելավումը: Լինելով ընդհանուր եզրույթ՝ այն ներառում է որակի քաղաքականության և նպատակների իրագործումը երաշխավորող բոլոր գործողություններն ու պատասխանատվությունը և ապահովում է դրանց գործառությունը որակի պլանավորման, վերահսկման, ապահովման և բարելավման մեխանիզմների միջոցով:
Որակի պլանավորում Որակի պլանավորումը կազմված է մի շարք գործողություններից. այն սահմանում է բարձրագույն կրթության որակին և որակի համակարգի կիրառմանը վերաբերող նպատակներն ու պայմանները: Որակի պլանավորումը ներառում է «արտադրանքի» պլանավորում (որակին վերաբերող հատկանիշների կարևորության նույնականացում, դասակարգում և որոշում, ինչպես նաև որակի հետ առնչվող նպատակների, որակին վերաբերող պայմանների և դրա սահմանափակումների հաստատում, կառավարման և գործառութային պլանավորում (ներառում է բուհի՝ գործունեության կազմակերպումը և կրթական ծրագրերի մշակումը), որակի ապահովման ծրագրերի զարգացում և որակի բարելավման միջոցների ապահովում:

R

Ranking/League Tables

Ranking and league tables are an established technique for displaying the comparative ranking of organizations in terms of their performance. They are meant to supply information to interested stakeholders, consumers, and policy-makers, alike on measurable differences in service quality of several similar providers. Even if somewhat controversial, especially concerning the methodological aspects, they are quite popular and seen as a useful instrument for public information, while also providing an additional incentive to quality improvement. Ranking/league tables are generally published in the popular press and magazines, specialized journals and on the Internet. The ranking process starts with the collection of data from existing data sources, site visits, studies, and institutional research. Following collection, the type and quantity of variables are selected from the information gathered. Then, the indicators are standardized and weighted from the selected variables. Finally, calculations are conducted and comparisons are made so that institutions are sorted into “ranking order”. Ranking/league tables make use, in the process of evaluation of institutions or programmes, of a range of different indicators. The results of ranking/league tables (the “scores” of each assessed institution) may thus vary from one case to another, depending on the number of indicators used or on the indicators themselves. Ranking indicators or criteria usually take into consideration scientific, pedagogic, administrative, and socio-economic aspects: student/staff ratio, A-level points (held by first-year students), teaching and research (as marks received in teaching and research assessments by individual departments), library and computer spending, dropout rates, satisfaction, study conditions, employment perspectives, etc. In accordance with the latest international conventions on ranking (i.e. ‘Berlin Principles’), rankings should offer comparative information and a better understanding of higher education, but should not be considered and used as a primary method for the assessment of academic quality. They should also clearly inform consumers with regard to all the indicators and factors used to rank higher education institutions or programmes, allowing the public to independently decide upon their respective weight.

Դասակարգման աղյուսակներ

Դասակարգման աղյուսակների կիրառումը սահմանված մեթոդ է, որի միջոցով իրականացվում է կազմակերպությունների համեմատական դասակարգում՝ հիմնված իրենց կատարողականի վրա: Այս մեթոդը միտված է ապահովել տեղեկատվություն շահակիցներին, կրթության սպառողներին, քաղաքականություն որոշողներին մի քանի նմանատիպ «կրթության մատակարարների» որակի զգալի տարբերությունների վերաբերյալ: Նույնիսկ եթե այն փոքրիշատե վիճահարույց է, հատկապես երբ հարցը վերաբերում է մեթոդաբանական տեսանկյուններին/ ասպեկտներին, դասակարգումը բավականին հանրաճանաչ մեթոդ է և ընդունվում է որպես հասարակության տեղեկացվածության կարևոր գործիք, որը միաժամանակ ապահովում է խթաններ որակի բարելավման համար: Դասակարգման աղյուսակները սովորաբար հրատարակվում են հանրաճանաչ թերթերում և ամսագրերում, մասնագիտական ամսագրերում կամ ինտերնետում: Դասակարգման գործընթացը սկսվում է առկա աղբյուրներից և ստուգայցերի, ուսումնասիրության և ինստիտուցիոնալ հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաքմամբ: Տեղեկատվության հավաքման գործընթացին հաջորդում է փոփոխականների տեսակի ու քանակի ընտրությունը ստացված տեղեկատվության պաշարից: Ապա, ընտրված փոփոխականների միջից առանձնացվում և ստանդարտացվում են չափանիշները: Վերջում, կատարվում են հաշվումներ և արվում են համեմատություններ, ինչի արդյունքում ուսումնական հաստատությունները դասավորվում են՝ համաձայն «դասակարգման հերթականության»: Ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի գնահատման ժամանակ դասակարգման աղյուսակները օգտագործում են մի շարք տարբեր ցուցիչներ: Հետևաբար, դասակարգման աղյուսակների արդյունքները (յուրաքանչյուր գնահատված հաստատության «նիշերը») կարող են տարբերվել այս կամ այն դեպքում՝ կախված օգտագործված ցուցիչների քանակից կամ հենց այդ ցուցիչներից: Դասակարգման ցուցիչները կամ չափանիշները սովորաբար հաշվի են առնում գիտական, մանկավարժական, ադմինիստրատիվ և սոցիալտնտեսական տեսանկյունները/ ասպեկտները՝ ուսանողների և դասախոսների հարաբերակցությունը, Ա մակարդակի կետերը (առաջին կուրսի ուսանողների դեպքում), ուսուցումն ու հետազոտությունը (առանձին բաժինների կողմից՝ ուսուցման և հետազոտության գնահատման արդյունքում ստացված տվյալները /գնահատականները), գրադարանային և կոմպյուտերային ծախսերը, դուրս մնացած ուսանողների քանակը, բավարարվածությունը, ուսումնառության պայմանները, աշխատանքի տեղավորման հեռանկարները և այլն: Համաձայն դասակարգմանը վերաբերող վերջին միջազգային համաձայնագրերի (օրինակ՝ «Բեռլինի սկզբունքներ»)՝ դասակարգումը պետք է առաջարկի համեմատական տեղեկատվություն և բարձրագույն կրթության ավելի լավ ըմբռնում, բայց չպետք է կիրառվի՝ որպես կրթական որակի գնահատման առաջնային մեթոդ: Բարձրագույն կրթության սպառողներին պետք է նաև տեղեկացնել ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի դասակարգման համար կիրառված բոլոր ցուցիչները ու գործոնները՝ թույլ տալով հասարակությանը ինքնուրույն որոշել հաստատության համապատասխան «կշիռը»:

Recognition
Formal acknowledgement of (i) individual academic or professional qualifications; (ii) programmes of a higher education institution; and/or (iii) quality assurance agencies, by a competent recognition authority that acknowledges certain standards and values with respect to special purposes that indicate the consequences of recognition. Recognition is usually of a cross-institutional or cross-border nature. As regards recognition of individual qualifications, learning experiences (e.g. degrees, diplomas, or periods of study) are validated with a view to facilitating the access of holders to educational and/or employment activities. Here, at least two kinds of recognition, those for academic and those for professional purposes, should be distinguished (see below). Programme recognition generally refers to the recognition of a specific programme of study of one higher education institution by another. It functions on the basis of a peeracknowledgement procedure and is meant to allow a student to engage in continued study at the latter institution or to exempt him or her from studying again subjects and materials which are not significantly different in different higher education institutions. With regard to institutions, recognition refers to the acknowledgement of quality assurance agencies or accrediting organizations, deemed to be trustful, efficient, and accountable institutions of quality assurance, following particular recognition standards set by the competent (usually foreign) recognition authorities.

Ճանաչում
Անհատի կրթական կամ մասնագիտական որակավորումների, բարձրագույն ուսումնական հաստատության կրթական ծրագրերի և որակի ապահովման գործակալությունների պաշտոնական ճանաչում իրավասու մարմնի կողմից. վերջինս ճանաչում է որոշակի չափորոշիչներ և արժեքներ, համաձայն սահմանված նպատակների, որոնք մատնանշում են ճանաչման հետևանքները: Ճանաչումը սովորաբար ունենում է միջհաստատութենական կամ միջսահմանային բնույթ: Ինչ վերաբերում է անհատական որակավորումների ճանաչմանը, ուսումնական փորձառությունը (աստիճաններ, դիպլոմներ, ուսումնառության ժամանակահատվածներ) վավերացվում է կրթական կամ աշխատանքի տեղավորման գործընթացները հանրությանը հասանելի դարձնելու նպատակով: Այստեղ պետք է զանազանել ճանաչման առնվազն երկու տեսակ (տե՛ս ներքևում)՝ կրթական և մասնագիտական նպատակների համար: Կրթական ծրագրի ճանաչումը ընդհանրապես վերաբերում է մեկ բարձրագույն ուսումնական հաստատության որոշակի կրթական ծրագրի ճանաչմանը մեկ այլ ուսումնական հաստատության կողմից: Այն գործում է փոխճանաչման ընթացակարգի հիման վրա և միտված է ուսանողին հնարավորություն ընձեռելու ներգրավվել ուսումնառության շարունակական գործընթացի մեջ վերջին ուսումնական հաստատությունում կամ նրան ազատելու կրկին միևնույն ուսումնական ծրագրերն ու նյութերը ուսումնասիրելու անհրաժեշտությունից, եթե դրանք էականորեն չեն տարբերվում ուրիշ բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդվող ուսումնական ծրագրերից: Հաստատությունների պարագայում, ճանաչումը վերաբերում է որակի ապահովման գործակալությունների կամ հավատարմագրման ընկերությունների ճանաչմանը, որոնք պետք է որ լինեն որակի ապահովման վստահելի, արդյունավետ և հաշվետու հաստատություններ, որոնք հետևում են իրավասու ճանաչման մարմնի (սովորաբար օտարերկրյա) կողմից սահմանված որոշակի ճանաչման չափորոշիչներին:

Recognition of Prior Learning The formal acknowledgement of skills, knowledge, and competencies that are gained through work experience, informal training, and life experience.
Register of European Higher Education Quality Assurance Agencies (REHEQA) The idea and implementation of the Register of European Higher Education Quality Assurance Agencies (REHEQA) is directly related to the Bologna Process and its objective of promotion of the European cooperation in quality assurance. In line with the decision of the Conference of the European Ministers Responsible for Higher Education in Bergen (May, 2005), the following four organizations and Consultative Members of the BFUG – ENQA, EUA, EURASHE and ESIB (the E4 Group) have developed a project which should lead to the operationalization of the Register. This work has been finalized and the relevant document presenting the structure, legal status, organization and financing of the Register will be submitted at the ministerial conference in London in May 2007. The purpose of the Register is to collect in a transparent way and provide generally accessible relevant information (through access to open website) about reliable and trustworthy quality assurance agencies operating in Europe. In order to be part of the Register, respective agencies and bodies need to comply with their national legislation as well as meet criteria set by the Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area.

Նախորդող կրթության ճանաչում Աշխատանքային փորձի, ոչ ֆորմալ վերապատրաստման և կենսափորձի արդյունքում ձեռքբերված կարողությունների, գիտելիքի և կոմպետենցիաների պաշտոնական ճանաչում:
Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գործակալությունների գրանցամատյան Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գործակալությունների գրանցամատյան ստեղծելու գաղափարը ուղղակի կերպով առնչվում է Բոլոնիայի գործընթացի և վերջինիս նպատակի հետ՝ նպաստել եվրոպական համագործակցությանը որակի ապահովման ոլորտում: Համապատասխան Բարձրագույն կրթության համար պատասխանատու եվրոպական նախարարների՝ Բերգենի համաժողովում (2005թ, մայիս) ընդունած որոշման՝ Բոլոնիայի գործընթացի վերահսկող խմբի հետևյալ չորս կազմակերպությունները և խորհրդատվական անդամները՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA), Բարձրագույն կրթության եվրոպական համալսարանների ասոցիացիան (EUA), Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) և Ուսանողների եվրոպական միությունը (ESIB) մշակեցին մի նախագիծ, որը պետք է հանգեցներ Գրանցամատյանի գործառնականացման ապահովմանը: Այս աշխատանքը վերջնականացվեց և Գրանցամատյանի կառուցվածքը, իրավական կարգավիճակը, կազմակերպչական կառուցվածքը և ֆինանսավորումը ներկայացնող համապատասխան փաստաթուղթը հանձնվեց 2007թ մայիսին Լոնդոնում կայացված նախարարների համաժողովին: Գրանցամատյանի նպատակն է երաշխավորել տեղեկատվության հավաքման թափանցիկությունը և, ընդհանրապես, ապահովել հանրությանը հասանելի և գործի հետ առընչվող տեղեկատվություն (հասանելի և բաց վեբ-կայքերի միջոցով) Եվրոպայում գործող վստահելի և հուսալի որակի ապահովման գործակալությունների վերաբերյալ: Գրանցամատյանը մասը կազմելու համար համապատասխան գործակալությունները և մարմինները պետք է բավարարեն իրենց ազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև համապատասխանեն Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցների կողմից սահմանված չափանիշներին:

Research Assistant System A system to employ excellent graduate students to assist with research. Its purpose is to provide financial support, facilitate the smooth conduct of research activities and recruit young researchers.
Research Supervisor Appointed full-time staff in graduate schools with excellent research careers, wide knowledge and experience, who supervise and advise on students' research.
Room Teacher System A system that appoints a supervisory teacher to a small group of students drawn from beyond or under faculties or departments, which enables students to receive finely-tuned support for their educational and student lives.
Rules for Degrees The law set out for the award of degrees by universities, junior colleges and QA agency.

S
Self-Assessment A systematic assessment to check current conditions and discover areas of excellence or in need of improvement in achieving objectives and goals. Institutions must strive to improve their quality in the light of the published assessment reports.
Self-Assessment Report A document subject institutions submit to a QA agency as the result of their self-assessment.
Simple Indicators A more general type of indicator, expressed in the form of absolute figures, intends to provide a relatively unbiased description of a process. Simple indicators are less relative than performance indicators as they exclude any judgments or points of reference (e.g. a standard, an objective, or an assessment).

Հետազոտությանը օժանդակող համակարգ Համակարգ, որը միտված է աշխատանքի տեղավորելու գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին՝ հետազոտական աշխատանքներին մասնակցելու նպատակով: Այս համակարգի նպատակն է ապահովել ֆինանսական աջակցություն, երաշխավորել հետազոտական գործունեության սահուն ընթացքը և հավաքագրել երիտասարդ հետազոտողներ:
Հետազոտական աշխատանքի ղեկավար Աստիճանաշնորհող հաստատություններում լրիվ դրույքով աշխատող պրոֆեսորադասախոսական կազմ, ովքեր ունեն գերազանց հետազոտական կարիերա, խոր գիտելիքներ ու փորձ և ղեկավարում են ուսանողների հետազոտական աշխատանքները և տրամադրում են խորհրդատվություն:
Անհատական դասընթացների համակարգ Համակարգ, որը ֆակուլտետի կամ բաժնի դասընթացներից ետ մնացած ուսանողների փոքր խմբի համար նշանակում է ղեկավար ուսուցիչ, որը ուսանողներին համապատասխան աջակցություն է տրամադրում իրենց կրթական և ուսանողական կյանքում:
Աստիճանների շնորհման կարգ Օրենք, որը մշակված է համալսարանների, կրտսեր քոլեջների և որակի ապահովման գործակալությունների կողմից աստիճաններ շնորհելու համար:

Ինքնագնահատում Ուսումնական հաստատության կանոնավոր գնահատում՝ ներկա վիճակը ստուգելու և խնդիրներն ու նպատակները իրականացնելիս գերազանց կամ բարելավման կարիք ունեցող բնագավառները բացահայտելու նպատակով: Ուսումնական հաստատությունները պետք է ձգտեն բարելավել իրենց որակը՝ հրատարակված ինքնագնահատման զեկույցի հիման վրա:
Ինքնագնահատման զեկույց Փաստաթուղթ, որը ուսումնական հաստատությունները ներկայացնում են որակի ապահովման գործակալությանը իրենց ինքնագնահատման արդյունքում:
Պարզ ցուցիչներ Ցուցիչի առավել ընդհանուր տեսակ՝ արտահայտված բացարձակ թվանշաններով, որը նպատակաուղղված է ապահովելու գործընթացի համեմատաբար ոչ կողմնակալ բնութագիրը: Պարզ ցուցիչները համեմատաբար ավելի քիչ հարաբերական են, քան կատարողականի ցուցիչները, քանի որ դրանք բացառում են որևէ եզրակացություններ կամ հղման կետեր (օր.՝ չափորոշիչ, նպատակ կամ գնահատում):

Site Visit A component of external evaluation that is normally part of an accreditation process. It may be initiated by the institution itself. It consists of external experts visiting a higher education institution to examine the self-study produced by the institution and to interview faculty members, students, and other staff in order to assess quality and effectiveness (and to put forward recommendations for improvement).
Specialized Accreditation The accreditation of individual units or programmes (e.g. professional education), by “specialized” or “programme” accrediting bodies applying specific standards for curriculum and course content.
Special Programs for Teaching Exceptional measures that allow graduate programs to be conducted in evenings or other specific times for students who are in employment and find it difficult to attend daytime classes.
Stakeholders In the sector of higher education, the term is generally used to describe people with an interest in, or related to, higher education institutions such as students, parents and applicants.
Standards Statements regarding an expected level of requirements and conditions against which quality is assessed or that must be attained by higher education institutions and their programmes in order for them to be accredited or certified. The term standard means both a fixed criteria (against which an outcome can be matched) and a level of attainment.

Ստուգայց ուսումնական հաստատություն Արտաքին գնահատման բաղադրիչ, որը սովորաբար հավատարագրման գործընթացի մի մասն է: Ստուգայցի նախաձեռնողը կարող է լինել հենց ուսումնական հաստատությունը: Այն կազմված է հետևյալ քայլերից. արտաքին փորձագետների խումբը այցելում է բարձրագույն ուսումնական հաստատություն՝ հաստատության կողմից տրամադրված ինքնագնահատման հաշվետվություն ուսումնասիրելու և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի, ուսանողների և այլ աշխատակիցների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով, որպեսզի գնահատի որակն ու արդյունավետությունը (և բարելավման համար խորհրդատվություն տրամադրի):
Մասնագիտացված հավատարմագրում Առանձին միավորների կամ կրթական ծրագրերի (օրինակ՝ մասնագիտական կրթություն) հավատարմագում «մասնագիտացված» կամ «կրթական ծրագրերի» հավատարմագրող մարմինների կողմից, որոնք առանձնահատուկ չափորոշիչներ են կիրառում ուսումնական պլանների և դասընթացների բովանդակության համար:
Ուսուցման հատուկ ծրագրեր Բացառիկ միջոցներ, որոնք թույլ են տալիս ավարտական կրթական ծրագրերի իրականացումը երեկոյան կամ այլ առանձնահատուկ ժամերին՝ աշխատող կամ այն ուսանողների համար, որոնք ցերեկային դասերին չեն կարող հաճախել:
Շահակիցներ Բարձրագույն կրթության ոլորտում այս եզրույթը սովորաբար օգտագործվում է՝ այն մարդկանց բնութագրելու համար, ովքեր հետաքրքրված են բարձրագույն ուսումնական հաստատություններով կամ առնչվում են դրանց հետ. ուսանողներ, ծնողներ և դիմորդներ:
Չափորոշիչներ Ձևակերպումներ, որոնք վերաբերում են պահանջների և պայմանների որոշակի ակնկալվող մակարդակներին, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի մասնագիտական հաստատության կամ կրթական ծրագրերի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ արտոնագիր ստանալու համար: «Չափորոշիչ» եզրույթը նշանակում է և՛ ֆիքսված/ ամրագրված չափանիշ (որի միջոցով կարող է չափվել արդյունքը), և՛ ձեռքբերման մակարդակ:

Standards may take a quantitative form, being mostly the results of benchmarking, or they may be qualitative, indicating only specific targets (e.g. educational effectiveness, sustainability, core commitments, etc.).

When quantitative, the standards include threshold levels that have to be met in order for higher education institutions or programmes to be accredited.

More often than not, the thresholds or the "basic standards" are defined at the level of minimally acceptable quality. On other occasions, the standards refer to the highest level of quality, thus being considered as "standards of excellence".

These may result from a benchmarking exercise or be asserted implicitly, being so recognized by the peers in a collegiate way.

Standards may have different reference points: (i) inputs (e.g. content standards); (ii) outputs (e.g. performance standards), (iii) processes. Standards can be general (for a degree level, e.g. a Bachelor's or a Master's Degree) or subject-specific (e.g. discipline benchmarking statements in the United Kingdom).

Standards are thus related to a specific (institutional programme) culture of evidence. In the context of the growing diversity of higher education, the translation of academic quality into standards and indicators has become complex.

Often, a more dynamic approach to defining and assessing standards is visible (a mixture of reality-based components and potentiality-focused ones). The challenge is threefold: (i) to diminish the number of reference standards; (ii) to relate them to appropriate performance indicators while also making use of specific criteria within a consistent culture of evidence; and (iii) to provide for sufficient flexibility in the formulation of standards in order to allow for innovative academic developments. Standards are often used synonymously with criteria, as in the United States, while in Europe, standards are

Չափորոշիչները կարող են ստանալ քանակական ձև/արտահայտվել քանակապես/՝ լինելով առավելապես բենչմարքինգի արդյունք, ինչպես նաև կարող են լինել որակական՝ մատնանշելով միայն առանձնահատուկ թիրախներ (կրթական արդյունավետությունը, կայունությունը, հիմնական պարտավորությունները և այլն): Քանակական չափորոշիչները ներառում են այն շեմային մակարդակները, որոնց բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ կրթական ծրագրերը պետք է բավարարեն՝ հավատարմագրում ստանալու համար: Առավել հաճախ շեմային կամ «հիմնական/առանցքային չափորոշիչները» բնութագրում են որակի ընդունելի նվազագույն մակարդակը: Այլ դեպքերում չափորոշիչները վերաբերում են որակի առավելագույն մակարդակին՝ համարվելով «գերազանցության չափորոշիչներ»: Սրանք կարող են լինել բենչմարքինգի արդյունք կամ հաստատվել ոչ բացահայտ կերպով՝ կոլեգիալ ձևով ճանաչվելով /նույն մակարդակի/փորձագետների կողմից: Չափորոշիչները կարող են ունենալ տարբեր հղման կետեր՝ ա) ներածումներ (օրինակ՝ բովանդակության չափորոշիչներ), բ) արդյունքներ (օրինակ՝ կատարողականի չափորոշիչներ), գ) գործընթացներ: Չափորոշիչները կարող են լինել ընդհանուր (աստիճանի մակարդակի համար. օրինակ՝ Բակալավրի աստիճան, Մագիստրոսի աստիճան) և առարկայական/կոնկրետ (Մեծ Բրիտանիայում առարկայի բենչմարքինգի սահմանումը): Չափորոշիչները կարող են նաև տարբերվել՝ ըստ չափորոշիչների սահմանման տարբեր մեթոդների տեսակների (ինչպիսիք են՝ չափանիշների վրա հիմնվելու մեթոդը, նվազագույն կարողությունների մեթոդը, կամ նպատակների սահմանման մեթոդը): Որպեսզի հնարավոր լինի պատշաճ ձևով որոշել, թե արդյոք որակի որոշակի չափորոշիչ բավարարվել է թե ոչ, այդ չափորոշիչը պետք է հստակ սահմանվի և վերաբերի որոշակի չափանիշներին, որոնք հետագայում կարող են բաժանվել (առավել գործառական) ցուցիչների:

Չափորոշիչները, այսպիսով, վերաբերում են (ինստիտուցիոնալ ծրագրի դեպքում) ապացույցների մշակույթին: Հաշվի առնելով բարձրագույն կրթության աճող բազմազանությունը, կրթական որակի արտահայտումը չափորոշիչներով և ցուցիչներով բարդացել է: Հաճախ հնարավոր է կիրառել չափորոշիչների սահմանման և գնահատման առավել դինամիկ մոտեցում (փաստերի վրա հիմնված և սահմանված պոտենցիալ բաղադրիչների միախառնում): Մարտահրավերը եռամակարդակ է՝ ա) նվազեցնել հղման չափորոշիչների քանակը, բ) զուգակցել դրանք համապատասխան կատարողականի ցուցիչներին՝ կիրառելով արանձնահատուկ չափանիշներ ապացույցների հստակ մշակույթի սահմաններում, գ) չափորոշիչների ձևակերպման ժամանակ ապահովել համապատասխան ճկունություն՝ հնարավոր դարձնելով նորարարական

becoming increasingly distinct from criteria. A distinction between quality and standards (similar to the difference between process and outcomes) is also made, the term “quality standards” that is sometimes used being equivalent to the notion of standards as criterion.

In higher education standards are frequently set and assessed in four main areas:

-Academic standards (related to the intellectual abilities of students)
- Standards of competence (related to the technical abilities of students),
- Service standards (refer to the standards of service provided by the organization to the student)
- Organizational standards (principles and procedures by which the institution assures that it provides an appropriate learning and research environment)

Standards for the Establishment of Universities
The law which states the basic requirements that those who apply to establish a new university must fulfill. It also functions as standards which existing universities must maintain. It covers education and research structures, curriculums, academic staff and facilities.

Statement of Objection
An arrangement for subject institutions to make remarks on, or objections to, the draft evaluation results notified by a QA agency, through the submission of documents. This aims to ensure transparency and accuracy of the evaluation processes.

Student Evaluation of Teachers
The process of using student inputs concerning the general activity and attitude of teachers. These observations allow the overall assessors to determine the degree of conformability between student expectations and the actual teaching approaches of teachers. Student evaluations are expected to offer insights regarding the attitude in class of a teacher (approachable, open-minded, entertaining, creative, patient, etc.), and the

կրթական զարգացումները: Չափորոշիչները հաճախ օգտագործվում են՝ որպես չափանիշների հոմանիշներ, ինչպես ԱՄՆ-ում, բայց Եվրոպայում չափորոշիչների և չափանիշների տարբերությունը առավել հստակ է դառնում: Տարբերություն է դրվում նաև որակի և չափորոշիչների միջև (նման է գործընթացի և արդյունքների միջև տարբերությանը). «որակի չափորոշիչներ» եզրույթը երբեմն համապատասխանեցվում է «չափորոշիչները որպես չափանիշ» հասկացությանը: Բարձրագույն կրթության մեջ չափորոշիչները հաճախ սահմանվում և գնահատվում են չորս հիմնական բնագավառներում.

- Ակադեմիական/կրթական չափորոշիչներ (վերաբերում է ուսանողների մտավոր կարողություններին)
- Կարողությունների/ կոմպետենցիաների չափորոշիչներ (վերաբերում է ուսանողների տեխնիկական կարողություններին)
- Ծառայությունների չափորոշիչներ (վերաբերում է կազմակերպության կողմից ուսանողին տրամադրվող ծառայություններին)

Կազմակերպչական չափորոշիչներ (վերաբերում է այն սկզբունքներին և ընթացակարգերին, որոնց միջոցով ուսումնական հաստատությունը երաշխավորում է, որ ապահովում է համապատասխան ուսումնական և հետազոտական միջավայր):

Համալսարանների հիմնադրման չափորոշիչներ
Օրենք, որը սահմանում է պայմաններ նոր համալսարանների հիմնադրման համար: Այս չափանիշները պետք է նաև պահպանվեն արդեն իսկ գործող ուսումնական հաստատությունների կողմից: Այն ներառում է կրթական և հետազոտական համակարգերը, ուսումնական պլանները, պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և հարմարությունները:

Առարկության սահմանում
Հնարավորություն, որի շնորհիվ ուսումնասիրվող ուսումնական հաստատությունները կարող են անել դիտողություններ կամ առարկել որակի ապահովման գործակալության կողմից տրված գնահատման արդյունքները արտացոլող փաստաթղթի նախնական տարբերակին: Սրա նպատակն է ապահովել գնահատման գործընթացի թափանցիկությունն ու ճշգրտությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում ուսանողների կողմից
Գործընթաց, որի միջոցով ուսանողներն իրենց ներդրումն են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր գործունեության և վերաբերմունքի գնահատման մեջ: Այս ուսումնասիրությունները թույլ են տալիս փորձագետներին որոշել համապատասխանությունը ուսանողների ակնկալիքների և դասախոսների իրական ուսումնական մոտեցումների միջև:

abilities of a teacher (to explain things, to motivate students, to help students think, to correct mistakes in a friendly manner, to offer information efficiently, etc.).
Student Learning Outcomes Statements of what a learner is expected to know, understand, and be able to demonstrate after completion of a process of learning as well as the specific intellectual and practical skills gained and demonstrated by the successful completion of a unit, course, or programme. Learning outcomes, together with assessment criteria, specify the minimum requirements for the award of credit, while grading is based on attainment above or below the minimum requirements for the award of credit. Learning outcomes are distinct from the aims of learning in that they are concerned with the achievements of the learner rather than with the overall intentions of the teacher.
Student Life Support Various supporting systems that enable students to fully concentrate on their studies and have a meaningful campus life. They include career/ employment advice, life guidance and accident compensation systems.
Student Outcome Assessment The act of assembling, analyzing, and using both quantitative and qualitative evidence of teaching and learning outcomes, in order to examine their congruence with stated purposes and educational objectives and to provide meaningful feedback that will stimulate improvement.
Student Survey An assessment method that uses surveys and interviews to ascertain the satisfaction of enrolled students with programmes, services, and different other aspects of their academic experience. Students are usually asked to respond to a series of open-ended, close-ended, or telephone questions. The survey may include in-class questionnaires, mail questionnaires, telephone questionnaires, and interviews (standard, in-person, or focus group).

Ուսանողների կողմից գնահատումը պետք է բացահայտի դասախոսի վերաբերմունքը լսարանում (մատչելի, զարգացած, հետաքրքիր, զվարճացնող, համբերատար, և այլն), և դասախոսի կարողությունները (բացատրելու, շահագրգռելու ուսանողներին, օգնելու ուսանողներին մտածել, ուղղելու ուսանողների սխալները ընկերական մոտեցմամբ, առաջարկելու արդյունավետ տեղեկատվություն և այլն):
Ուսանողի ուսումնառության արդյունքներ Ձևակերպումներ այն մասին, թե ինչ է պետք իմանա, հասկանա և ունակ լինի կատարել սովորողը ուսումնառության գործընթացի ավարտին, ինչպես նաև այն մտավոր ու գործնական հմտությունները, որոնք ձեռք են բերվում և ցուցադրվում են դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին: Ուսումնառության արդյունքները գնահատման չափանիշների հետ սահմանում են կրեդիտի շնորհման համար նվազագույն պահանջները, մինչդեռ գնահատումը հիմնված է կրեդիտների շնորհման համար նվազագույն պահանջներից առավել կամ պակաս արդյունքներ ցուցաբերելու վրա: Ուսումնառության արդյունքները տարբերվում են ուսումնառության նպատակներից նրանով, որ ավելի շատ կապված են ուսանողի ձեռքբերումների, քան դասախոսի ընդհանուր մտադրությունների հետ:
Ուսանողների աջակցության համակարգ Աջակցության զանազան համակարգեր, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողներին ամբողջովին կենտրոնանալ իրենց ուսումնառության վրա և ունենալ իմաստալից առօրյա ուսանողական ավանում: Այդ համակարգերը ներառում են խորհրդատվություն կարիերայի/ աշխատանքի տեղավորման վերաբերյալ, կյանքում ուղղորդության և դժբախտ պատահարների փոխհատուցման համակարգեր:
Ուսանողների արդյունքների գնահատում Գործընթաց, որով հավաքվում, վերլուծվում և կիրառվում են ուսուցման և ուսումնառության արդյունքների և՛ քանակական, և՛ որակական փաստերը՝ նախասահմանված նպատակների և կրթական խնդիրների հետ դրանց համապատասխանությունը ստուգելու և իմաստալից հետադարձ կապ ապահովելու նպատակով, որը կխթանի բարելավումը:
Ուսանողների հարցում Գնահատման մեթոդ, որը կիրառում է հարցումներն ու հարցազրույցները ուսանողների գոհունակությունը կրթական ծրագրերից, ծառայություններից և իրենց կրթական փորձառության այլ բնագավառներից որոշելու համար: Ուսանողներին խնդրում են պատասխանել մի շարք բաց, փակ հարցերի և մասնակցել հեռախոսային հարցումների: Ուսանողների հարցումը կարող է ներառել լսարանային, էլեկտրոնային, հեռախոսային հարցաշարեր, և

Student surveys are relatively inexpensive, easy to administer, and can reach participants over a wide area. They are best suited for concise and non-sensitive topics, being able to give a sense, from the student perspective, of what is happening at a given moment in time, in the respective higher education institutions.

Some observers may question their validity or reliability, as well as their relevance to academic policy.

Study Programme
A core, modular component of higher education including all the activities (design, organization, management, as well as the process of teaching, learning and research) carried out in a certain field and leading to an academic qualification. Study programmes are established by higher education institutions or organizations and may differ by level of academic qualification (Bachelor, Master, Doctorate); study mode (full-time, part-time, distance learning, etc.); and field of knowledge specialization, in accordance with academic and professional division of labour.

A study programme is accomplished through: (i) a curriculum, including all disciplines leading to an academic qualification, distributed by year of study, their weight being expressed in ECTS (European Credit Transfer System) type of study credits; (ii) syllabuses or course programmes, containing a description of the teaching and learning themes and practices associated with teaching, learning and evaluation; (iii) the organizational chart of
students and teaching staff covering the period of implementation of the study programme; (iv) the system of academic quality assurance for all activities necessary for the completion of the study programme.

հարցազրույցներ (ստանդարտացված, անհատական հարցազրույցներ, ֆոկուս-խմբային քննարկումներ):
Ուսանողների հարցումները համեմատաբար ոչ ծախսատար են, դյուրին իրականացման առումով և կարող են ներառել մասնակիցների ստվար զանգված: Նրանք առավելապես հարմար են համառոտ և ոչ զգայուն թեմաներ քննարկելու համար և հնարավորություն են ընձեռում արտահայտելու, ուսանողների տեսանկյունից, թե ինչ է կատարվում տվյալ պահին համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում: Որոշ հետազոտողներ կարող են հարցի տակ դնել դրանց վավերականությունը և հուսալիությունը, ինչպես նաև նրանց համապատասխանությունը կրթական/ակադեմիական քաղաքականությանը:

Կրթական ծրագիր
Բարձրագույն կրթության հիմնական, մոդուլային բաղադրիչ, որը ներառում է որոշակի բնագավառում կատարվող բոլոր գործընթացները (մշակում, կազմակերպում, կառավարում, ինչպես նաև ուսուցում, ուսումառություն և հետազոտություն) և հանգեցնում է կրթական որակավորման: Կրթական ծրագրերը սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ընկերությունների կողմից և կարող են տարբերվել կրթական որակավորման աստիճանով (Բակալավրի, Մագիստրոսի, Դոկտորի), ուսուցման եղանակով (առկա, հեռակա, հեռավար և այլն) և մասնագիտական գիտելիքների ուղղվածությամբ՝ համապատասխանելով աշխատուժի մասնագիտական և կրթական բաժանմանը:
Կրթական ծրագիրը իրականացվում է՝ ա)ուսումնական պլանների միջոցով, որոնք ներառում են կրթական որակավորման հանգեցնող բոլոր առարկաները, որոնք դասավանդվում են ուսումնական տարվա ընթացքում և արտահայտվում են Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի սահմանած կրեդիտներով; բ) դասընթացի ուղեցույցի կամ ծրագրի նկարագրի միջոցով, որը ներառում է ուսուցման և ուսումնառության թեմաների նկարագիրը և ուսուցման, ուսումնառության և գնահատման հետ առնչվող գործողությունները; գ) կրթական ծրագրի իրականացման ժամանակ մասնակից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի կազմակերպչական սխեմայի միջոցով, դ) կրթության որակի ապահովման համակարգի միջոցով, որը ներառում է կրթական ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Subject Benchmark/Subject Benchmark Statements Subject benchmark statements provide means for the academic community to describe the nature and characteristics of programmes in a specific subject and the general expectations about standards for the award of a qualification at a given level in a particular subject area. They are reference points in a quality assurance framework more than prescriptive statements about curricula.
Subject Evaluation Evaluation of specific academic fields or functions.
Syllabus A detailed plan of each subject for students' reference when selecting subjects and preparing for classes. In general, it contains specifics on how, where, when and by whom each class will be held, objectives, topics that will be covered, grading policies, instructions for preparation, etc. It may also be used for adjustment of subject contents by academic staff or evaluation of teaching.

T
Teaching Assistant System A system under which universities employ excellent graduate students on a temporary contract to provide them with opportunities to develop their teaching skills, and financial support. Teaching assistants serve as advisors to undergraduate students and assist experiments.
Thematic Evaluation Evaluation in which institutions are assessed on their international exchanges, social contribution and so on in light of certain themes set by evaluation organizations.

Առարկայական բենչմարքեր/ Առարկայական բենչմարքերի սահմանում Առարկայական բենչմարքերի սահմանումը կրթական հանրության համար միջոց է՝ բնութագրելու որոշակի առարկայական ոլորտում կրթական ծրագրերի բնույթն ու առանձնահատկությունները և այդ առարկայական ոլորտի տրված մակարդակում որակավորումների շնորհման չափորոշիչների վերաբերյալ ընդհանուր ակնկալիքները: Դրանք ավելի շատ հղման կետեր են որակի ապահովման շրջանակում, քան ուսումնական պլանի վերաբերյալ ուղղորդող ձևակերպումներ:
Առարկայական գնահատում Առանձնահատուկ կրթական բնագավառների կամ գործառույթների գնահատում:
Դասընթացի/առարկայի ուղեցույց Յուրաքանչյուր առարկայի մանրակրկիտ պլան ուսանողների համար, որը ծառայում է առարկաները ընտրելիս և դասերին պատրաստվելիս: Ընդհանրապես, այն պարունակում է մանրամասներ, թե յուրաքանչյուր դասընթացը ինչպես, որտեղ, երբ և ում կողմից է իրականացվելու, դասընթացի նպատակները, թեմաները, գնահատման քաղաքականությունը, դասընթացին պատրաստվելու հրահանգները և այլն: Այն կարող է նաև օգտագործվել պրոֆեսորադասախոսական կազմի կողմից դասընթացի բովանդակությունը վերահսկելու և ուսուցումը գնահատելու նպատակով:

Դասավանդմանը օժանդակող համակարգ Համակարգ, որով համալսարանները ժամանակավոր աշխատանքի պայմանագիր են կնքում գերազանց առաջադիմությամբ շրջանավարտների հետ՝ հնարավորություն ընձեռելով նրանց զարգացնելու իրենց ուսուցանելու կարողությունները և ցուցաբերելով ֆինանսական աջակցություն: Դասավանդողի օգնականները ծառայում են որպես ուսանողների խորհրդատուներ և աջակցում են փորձերի ժամանակ:
Թեմատիկ գնահատում Ուսումնական հաստատությունների միջազգային փոխանակումների, սոցիալական ներդրման և այլ գործունեության գնահատում՝ հիմնված գնահատող կազմակերպությունների կողմից առաջադրված որաշակի թեմաների վրա:

Third-Party Evaluation Evaluation conducted entirely by independent bodies. They nominate the evaluators and the evaluation items. It is different from external evaluation.
Total Quality Management (TQM) A particularly influential comprehensive approach to quality management that places emphasis on factors such as continuous improvement, customer focus, strategic management, need for explicit systems to assure quality of higher education, and a view of leadership and supervision that stresses employee empowerment and delegation. Such an approach to quality management emphasizes assessment that is undertaken of: (i) defined objectives or standards (set internally or by external funding bodies); (ii) measures of customer satisfaction; (iii) expert and professional judgment; and (iv) comparator organizations. TQM is considered to have a close conceptual and philosophical link with benchmarking methodologies. Such an approach has been mostly applied in the economic sector, being less used in the academic world.
Trans-Institutional Benchmarking Benchmarking that looks across multiple institutions in search of new and innovative practices.

U
Undergraduate Program A four-year curriculum (six years for medicine, veterinary medicine, dentistry and certain parts in pharmacy) in a faculty. Graduates are awarded a Bachelor's Degree.

Երրորդ կողմի գնահատում Ամբողջովին անկախ մարմնի կողմից իրականացված գնահատում: Նրանք են նշանակում գնահատողներին և գնահատման բնագավառները: Սա տարբերվում է արտաքին գնահատումից:
Որակի ամբողջական կառավարում Ազդեցիկ և համապարփակ մոտեցում որակի կառավարմանը, որը շեշտը դնում է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են շարունակական բարելավումը, կենտրոնացումը հաճախորդների պահանջների վրա, ռազմավարական կառավարումը, բարձրագույն կրթության որակը ապահովելու համար մատչելի համակարգերի կարիքը և առաջնորդության և գերակայության մոտեցումը, ինչը շեշտում է աշխատողի իրավասությունները և պատվիրակումը: Որակի կառավարման այսպիսի մոտեցումը շեշտադրում է գնահատման գործընթացը, որն իրականացվում է ա)սահմանված նպատակների և չափորոշիչների միջոցով (որոնք սահմանվում են ներքին կարգով կամ արտաքին ֆինանսավորող մարմինների կողմից), բ) «հաճախորդներին» գոհացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների օգնությամբ, գ) փորձագետների և մասնագիտական եզրակացությունների միջոցով, և դ)մրցակից կազմակերպությունների միջոցով: Որակի ամբողջական կառավարման և բենչմարքինգի մեթոդաբանության միջև տեսնում են բովանդակային և փիլիսոփայական կապ: Այսպիսի մոտեցումը առավելապես կիրառվել է տնտեսության բնագավառում՝ ավելի քիչ օգտագործվելով կրթական աշխարհում:
Տրանս-ինստիտուցիոնալ բենչմարքինգ Բենչմարքինգ, որն ուսումնասիրում է բազմաթիվ ուսումնական հաստատություններ՝ նոր և նորարարական փորձ գտնելու ակնկալիքով:

Բակալավրական ծրագիր Ֆակուլտետում իրականացվող չորսամյա ուսումնական պլան (բժշկության, անասնաբուժության, ատամնաբուժության և դեղագործության որոշակի ուղղությունների դեպքում ուսուցման տևողությունը 6 տարի է): Շրջանավարտներին շնորհվում է Բակալավրի աստիճան:

University
A university offers a four-year higher education (six years for medicine, dentistry, pharmacy and veterinary medicine) and requires graduation from upper secondary schools or equivalent academic ability for admission. Students who graduate from universities are awarded a Bachelor's Degree.

V

Validation
The process by which a programme is judged to have met the requirements for an award by a relevant institution with degree-awarding powers (institutional self-evaluation) or by a relevant examining board (validation by an outside examining body).

Verification
The process to judge the effectiveness and appropriateness of a QA agency's evaluation activities after their implementation.

Viewpoints
Reference points and example data listed under each evaluation standard for subject institutions to refer to when implementing self-assessment. A QA agency refers to these viewpoints when judging whether an institution's performance meets the Standards or not. Institutions may also create their own viewpoints to reflect their particular characteristics.

W

Workload
A quantitative measure of the learning activities that may be required for the achievement of learning outcomes (e.g. lectures, seminars, practical work, private study, information retrieval, research, examinations).

Համալսարան
Ուսումնական հաստատություն, որն առաջարկում է չորսամյա բարձրագույն կրթություն (բժշկության, անասնաբուժության, ատամնաբուժության և դեղագործության դեպքում ուսուցման տևողությունը 6 տարի է) և ընդունելության համար պահանջում է ավագ միջնակարգ դպրոցի ավարտում կամ համարժեք կրթական կարողություն: Համալսարանն ավարտող ուսանողներին շնորհվում է Բակալավրի աստիճան:

Վալիդացում
Գործընթաց, որի արդյունքում եզրակացություն է արվում աստիճան շնորհող մարմնի (ինստիտուցիոնալ ինքնագնահատում) կամ համապատասխան հետազոտող խորհրդի (վալիդացում արտաքին հետազոտող մարմնի կողմից) կողմից առ այն, որ կրթական ծրագիրը բավարարում է գործունեության համար սահմանված պահանջներին:

Ստուգում
Գործընթաց, որի միջոցով դատում են որակի ապահովման գործակալության՝ գնահատման գործընթացների արդյունավետության և համապատասխանության մասին՝ դրանց իրականացումից հետո:

Տեսակետներ
Ուսումնասիրվող ուսումնական հաստատությունների համար նախատեսված հղման կետեր և օրինակելի տվյալներ, որոնց նրանք կարող են հղում կատարել՝ ինքնագնահատումն իրականացնելիս: Որակի ապահովման գործակալությունը հիմնվում է այս տեսակետերի վրա, երբ դատում է ուսումնական հաստատության կատարողականության համապատասխանությունը չափորոշիչներին: Հաստատությունները կարող են նաև ստեղծել իրենց սեփական տեսակետեր ՝ իրենց որոշակի առանձնահատկությունները արտահայտելու համար:

Ծանրաբեռնվածություն
Ուսումնառության գործընթացների քանակական չափում, որը կարող է պահանջվել ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար (օրինակ՝ դասախոսություններ, սեմինարներ, գործնական աշխատանքներ, անհատական ուսուցում, տեղեկատվության տրամադրում, հետազոտական աշխատանքներ):

References / Գրականության ցանկ

Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions (2007), UNESCO, Bucharest ISBN 92-9069-186-7

International Analytic Glossary of Issues Related to Quality in Higher Education [Prepared for the International Network of Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) and the EAIR Special Interest Group on Quality by Professor Lee Harvey, Centre for Research and Evaluation, Sheffield Hallam University, November 2004– December 2006. www.qualityresearchinternational.com/glossary/.

Glossary of Quality Assurance in Japanese Higher Education (2007), National Institution for Academic Degrees and University Evaluation

ՈՍԱԿ

ՀՀ, Երևան, 0028, Օրբելի 22,
info@anqa.am, www.anqa.am
Հեռ: (+374 10) 22 91 46, 22 91 47
Ֆաքս: (+374 10) 22 91 48